



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ. ՏԱՐԻ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 1937 13^{me} Année - Octobre 1937

Խմբագրական
Դիտողներ
Հոգ. Կեանք
Հոգի սեղանը
Հինաւորաց Վեմը անյաղթ
Կենաց ածուներէն
Ձի բաւեր
Ոգւանոս
Ընորհաց ծովէն
Վկայութիւն մը
Սերասողութիւն
Յիսուս Քրիստոս մարդը
Երջանիկ յոյսը
Ժամանակին նշանները
Ընտանեկան
Քրիստոնեային վկայութիւնը եկեղեցիին մէջ
Պատանեաց
Տիպար տղակերտներ
Ձանազան լուրեր
Ամէն ժամ, ամէն տեղ

Յ. Լ. Գ.

Յար. Խ. Տամպալեան

Գ. Զաքարեան
Վեր. Dr. P. BERRON

Գրիգոր Կիրակոսեան

Յ. Ք.

ԲԱՆԲԵՐ հոգևոր ամսաները ելեն ֆրանսիայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կրօնական Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, իւրաքանչիւր «Բանին»
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարմարանալին մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգևոր ամսաները երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կազմէ գործը), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին փարգանութիւնը այլ տարրեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրումին կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու զրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգևոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ արախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

|||||

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 13 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 60 սէնթ

ՀԱՅԵՐԷՆ Եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք Եւ Արտասահման Տոլ. 1. 75
(Դիւրութեան համար travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ զրկուիլ):

Թղթակցութիւններ եւ յօդուածներ զրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère


MARSEILLE (France)

Մանսալով գրամական առաքումի առթիւ հաճեցէք մտնողին վրայ չմոռնալ գրելու
H. N. Ghazarossian, (Rédacteur) C. C. No. 182.53 Marseille

Արմենցի'ր դուն
որ կը բնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու փրկատու
քեզի լոյս պիտի
տայ:

Եփես. Ե. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Փանդի ալ առ-
կէ քիչ մը օտոնէն
Ան որ գալու է'
պիտի գայ ու պի-
տի Գուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԳ. ՏԱՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1937

ԹԻԻ 10



ԴԻՏՈՂՆԵՐ

Մարգարէից որդիներէն յիսուն մարդ գացին դիմացը՝

հեռուանց կայնեցան:

Դ. Թագ. Բ. 7

«Բանբեր»ի անցեալ երկու թիւերուն մէջ հա-
կիրճ տեսութիւն մը ունեցանք մեր ժողովներու
մասին: Այդ առթիւ կարգ մը գործնական թե-
լադրութիւններ ըրի մեր ժողովները օգտակա-
րապէս անցնելու, թէ մեզի եւ թէ ուրիշներու
վերաբերմամբ: Ինչ որ զրեցի, զուտ անձնական
փորձառութենէ էր, զոր ըրած էի Աստուծոյ զոր-
ծին մէջ ունեցած գործունէութեանս ընթացքին:
Կարելի էր դեռ զանոնք մանրամասնել ու ամէն
կէտերով աւելի ընդարձակել, սակայն յարմար
ոեպեցի միայն խորհրդածութեան մը ուղղութիւն
տալով բաւականանալ: Երբ իւրաքանչիւր ըն-
թերցող այս ուղղութեամբ խորհի կրնայ դեռ ա-
ւելի եւ շահաւէտ եզրակացութեանց հասնիլ:
Այդ ուղղութեամբ որքան մտածենք եւ որքան
գործենք ու գործակցինք վարիչներուն, այնքան
աւելի օգտակար կ'ըլլան մեր հաւաքոյթները:

Այս թիւով Զեր ուշադրութիւնը տալիս ուղ-
ղութեան մը կ'ուզեմ հրաւիրել, որ նոյնպէս գործ-
նական է եւ անցեալի մեր շօշափած նիւթին շա-
րունակութիւնը կրնայ սեպուիլ:

Եկեղեցւոյ հաւաքոյթներուն մէջ ընդհանրա-
պէս (առանց բացառութեան տեղի ու լեզուի եւ
ցեղի) կը նշմարուին կարգ մը անձեր զորոնք
դիտողներ կրնանք կոչել:

Ասոնք կուգան թերթի մը մէջ ծանուցում
կարդացած ըլլալով, կամ հետաքրքրական նիւ-
թի մը մասին խօսուելու լուրը առած ըլլալով կամ
հետաքրքրուելով թէ ինչ կ'անցնի կը դառնայ
այս հաւաքոյթներուն մէջ: Ուրիշներ, որոնք մե-
ծամասնաբար հոգեւորներ են, կ'ուզեն հասկնալ
թէ ինչպէ՞ս պիտի անցնի ժողովը, խօսողը ինչ-

պէս պիտի խօսի, աղօթքները ինչպէս պիտի
ըլլան, արթնցողներ եւ ապաշխարողներ պիտի
ըլլան եւ որոնք պիտի ըլլան: Այսպէս զեղե-
ցիկ ժամանց մը ունենալ կ'ուզեն, ուրախանա-
լով եթէ ապաշխարող մը ըլլայ եւ ժողովէն
վերջը անոր ձեռքն ալ սեղմելով եւ Աստուծոյ
խօսքէն ալ համար մը արտասանելով կամ ցուց-
նելով անոր: Ասոնք ամէնը գնահատելի բաներ են,
սակայն ընդհանրապէս ժամանակաւոր եւ զգա-
ցական ըլլալով խորունկ հոգեւոր կեանքի չեն
առաջնորդեր Աստուծոյ զաւակները: Կ'արժէ ու-
րեմն Աստուծոյ խօսքով քննել «դիտողները», ա-
նոնց կորսնցուցած պատեհութիւններն ու նաեւ
անոնց սպառնացող վտանգը:

Մեր վերնագիրը աւելի ճիշդ եւ հասկնալի
կ'ըլլայ երբ «դիմաց» բառին առջեւ ստորակէտը դը-
նենք, քանզի բնագրին հասկցնելիքը այդ է:
Մարգարէից որդիներէն յիսուն մարդ գացին,
դիմացը հեռուանց կայնեցան:

Այս կը ցուցնէ թէ անոնք հետեւեցան Եղիայի
ու Եղիսէի բաւականատէն, բայց տեղ մը եկաւ,
ուր անոնք կեցան և դիմացը հեռուանց կայնեցան:

Առաջին ընթերցման առթիւ թերեւս մեր ու-
շադրութենէն վրիպի այս խօսքին արժէքը: Բայց
դիտենք թէ Երեքովի մէջ գտնուող մարգարէից
դպրոցը լաւ դիրք մը բռնած էր Իսրայէլի մէջ,
թերեւս առաջին ու աւելի լաւ քան Բեթէլի մար-
գարէից դպրոցը: Ասոնք ունէին գնահատութեան
արժանի Աստուածաբանական դիտութիւն, սուր
ականջ ունէին լսելու ու սուր աչքեր տեսնելու
ինչ որ Աստուած պիտի ընէր Եղիային, արագա-

շարժ լեզու ունէին այդ մասին խօսելու Եղիսէի հետ, սակայն ինչ որ կը վերաբերի իրենց անձին, անոնք քալեցին քիչ մը ճամբայ Եղիային ու Եղիսէին հետ կամ հետեւէն՝ եւ տեղ մը գալով բաւական սեպեցին, հոն Յորդանանու ղրմացը կայնեցան ու սկսան ղիտել հետաքրքիր թէ ինչ պիտի պատահէր եւ ինչպէ՞ս պիտի պատահէր, որպէսզի կրնային նաեւ մանրակրկիտ պատմել ու վկայել եղածին մասին, որչափ որ կարելի է աւելի լաւ քան միւս ընկերը:

Ի՞նչ զարմանալի է մարդկային բնութիւնը, նոյնիսկ մարդարեւներուն եւ թագաւորութեան գործաւորներուն մէջ: Ու այսօր ալ պակաս չեն անոնք Աստուծոյ եկեղեցիին մէջ, սրոնք փոխանակ ամէն բան աչքի առած՝ ճշմարտութեան հետ — Քրիստոսի հետ մինչեւ վերջը քալելու, կը քալեն մինչեւ աստիճան մը, ձգելով գԱյն առանձին Դոյզնութան բարձրանալու: Անոնք աչքով հոն են, լեզուով հոն են, թերեւս ստքով հոն են, բայց սրտանց բոլորովին հեռու: Անոնք կուգան զաղափար մը առնելու, հասկնալու, բայց բնաւ չեն ուղիւ իրենց ոտքերը գետնէն վերցնել: Անցեալները հոգեւոր գործաւորի մը հետ կը խօսէի այսինչ մարդուն օրհնաբեր գործունէութեան մասին: Ինքը ըսաւ որ անոր ժողովներուն չէր կրնար երթալ, քանզի անոնց մէջ իր ոտքերը գետնէն պիտի կտրէին: Այո՛, այո է պատճառը որ հաւատացեալներ պարապ սրտով կը վերադառնան հոնկէ ուր շատե՛ր կ'օրհնուին, շատեր կը խոնարհին, կը կոտորին, Ս. Հոգիով կը լեցուին եւ ուրախ կը մեկնին:

Ի՞նչ ցաւալի է «ղիմացը կայնիլ», ի՞նչ գէշ տեղ, ո՛չ բոլորովին հեռուն, ոչ ալ ներսը: Բայց հեռուն: Ի՞նչ պատահութիւններ կը կորսուին այսպէս ոչ միայն անապաշխարներուն համար, հապա նաեւ հաւատացեալներէն անոնց համար որոնք մասնաւոր նախապաշարումով կուգան եւ ժողովներու մէջ կողք կողքի կը նստին օրհնուողներու հետ: Ս. Հոգիին հեղեղները կը հոսին ուրիշներու վրայ, բայց իրենք մէկ կաթիլ իսկ չեն կրնար ընդունիլ, քանզի իրենց միտքը պղտորած է յետին գաղափարներով: Անոնք հոն են բայց ոչ մէջը. անոնք առարկայական դիտողներ են:

Աւետարանչական գործունէութեանց մէջ ցաւով նկատած եմ որ երբ մէկ կողմէն հոգիներ արթնցած, ապաշխարած, մեղքերէն ազատուած, Քրիստոս Փրկիչը գտած ուրախութեամբ՝ Անոր համար վկայած են, միւս կողմէ գտնուած են անձեր որոնք տարիներով յաճախած են այդպիսի ժողովներ դիտողի դիրքով, առանց հպում մը ու-

նեցած ըլլալու Ս. Հոգիէն եւ բնաւ մտածած իսկ չեն թէ իրենք ալ ապաշխարելու են քանի որ իրենց ընկերները արդէն ապաշխարեցին եւ տարբեր մարդիկ եղան ու եկեղեցիին մէջ օգտակար ծառայութեան մէջ մտան: Անոնք կը նմանին ծովեզերքի աւազներուն, որոնք միշտ կը լողնան ալիքներէն, բայց անոնցմէ բնաւ չեն թրջուիր ներքնապէս:

Կը ճանչնամ նաեւ Աստուծոյ գաւազներ, որոնք Ս. Հոգիին այս այցելութիւններէն բան մը չկրցան ընդունիլ, խորհելով թէ իրենք արդէն գիտեն, արդէն ունին, արդէն կշտացած են, իրենք հարուստ են: Եկած են միայն գիտնալու թէ ի՞նչ կ'անցնի կը գառնայ: Հետաքրքրութեան ախտէն վարակուած ու հոգեւոր անունը իրենց մենավաճառ բրած ախտաւոր լրիստոնեաներ, տարիներով կը շարժին հոգեւոր գործունէութեանց տաք մթնոլորտին մէջ, բայց չեն ազատիր իրենց ախտէն պարապը անցնելով պատեհութիւնները: Խոնարհիլ, այո՛, կոտորիլ, այո՛, խոստովանիլ եւ ապաշխարել, այո՛, բայց ուրիշներուն համար, ե ոչ իրենց: Ասիկա կորստեան ճամբայ է, որ զիրեք մահուան պիտի տանի:

Դիտողները այսպէս պատեհութենէն չօգտուելով ոչ միայն իրենք անձամբ կը փրասուին եւ կը քարանան, անպէտ ու անպտուղ կը դառնան, հապա նաեւ իրենց միջավայրը կը թունաւորեն: Զգարմանաք այս բառին վրայ: Անապաշխարներ եթէ իրենց միջավայրը թունաւորեն, բոլորովին անբնական չերեւիր մեզի, սակայն բուն իսկ Աստուծոյ գաւազներէ ալ թունաւոր դարձահոտութիւններ յաճախ կը բուրեն:

Դիտէ հեղ մը Մարկ. ԺԴ. 3-8 եւ 304. ԺԲ. 1-8 համարներու տեսարանը: Մարիամ անուշահոտ նարդոսի իւզը կը կոտրէ, Յիսուսի գլխուն վրայ կը թափէ եւ Անոր ոտքերը կ'օծէ: Այդ քրոջ հոգեւոր գործունէութեան խորութիւնը չհասկըցող աշակերտներէն մին Յուդա անմիջապէս կը քննադատէ Մարիամի գործը որպէս աննպատակ եւ աւելորդ: Այդ դիտողին քննադատ խօսքը երկվայրկեանի արագութեամբ փոխանցուեցաւ միւսներուն, որոնք սկսան դժուարանալ եւ սաստիկ կը յանդիմանէին Մարիամը, որ յիրաւի չա՛տ աւելի սուր տեսութիւն մը ունէր Քրիստոսի փրկագործութեան մեծ գործին, քան իրենք: Բայց դիտէ թէ քննադատութեան հոգին ի՞նչ շուտ կը փոխանցուի. ժանտախտի միջբրոպէն աւելի շուտ կը վարակէ սրտերն ու մտքերը:

(Շար. կարկաւ 159րդ էջ)



ԶՈՂԻ ՍԵՂԱՆԸ

(Փիլ. Բ. 17)

«Թէպէտեւ ձեր հաւատքին պատարագին ու պաշտօնին վրայ ընծայուիմ, կ'ուրախանամ»: Ի՞նչ բացառիկ մարդ մըն է Պօղոս առաքեալը: Անսակաւ ուժով, ընտիր, պատրաստ ծախս ընելու եւ ծախս ըլլալու ուրիշներու համար: Շատ քրիստոնէականեր կը ծախսեն, սակայն ո՛չ արիւն թափելու չափ: Կոտտան աշնչափ միայն որ դիւրաւ ու առանց ցու գգալու կրնան տալ: Իրենց նուէրները իրենց անձերէն անջատ բաներ են սրտնցմէ զատուիլը արիւն թափել չհարկադրեր: Իրենց անձերը չպահանջող զոհերու միայն կը մասնակցին: Երբ հարցը կը դառնայ կենսական խնդիրներու շուրջ՝ ետ կը քաշուին: «Յազթական մուտքերու» մէջ աչքառու տեղեր կը գրասեն եւ զարդարանքներու, դրօշակներու, արծաւենիի ճիւղերու համար քիչ մը զրամ ծախսելու կը յօժարին, սակայն երբոր «Ովսանաները» չարագուշակ մըրմունջներու եւ սպառնալիքներու կը փոխուին ու Գողգոթան կ'սկսի երեւնալ, կամացուկ մը ապահով վայրեր կ'ապաստանին: Սակայն հոս կայ առաքեալ մը որ ուրախութեամբ յառաջ կը նայի փեմ ու ճգնաժամային պահանջներուն: Կարծես ձանձրացած է արեան կաթիլներ միայն թափելէ իր թագաւորին ծառայութեան մէջ, գրեթէ անհամբեր կ'սպասէ ի հարկին իր ամբողջ արիւնը թափելու: Նոր յիշած էր իր եկեղեցիներուն համար կատարած ծառայութիւնը, սակայն այնպէս կ'զգայ թէ այդ ծառայութիւնը հազիւ թէ յիշուելու արժանի է ու իր եռանդուն ու նախանձաւոր աչքերը կը դարձնէ աւելի ընդարձակ կարելիութիւններու, նոյն իսկ իր անձը զոհելու, քանզի այս խօսքին բառական թարգմանութիւնն է «թափուելու զոհի մը պէս թափուիլ»: «Թէպէտեւ ձեր հաւատքին պատարագին ու պաշտօնին վրայ ընծայուիմ, կ'ուրախանամ»:

Վայրկեան մը կանգ առնենք քիչ մը աւելի լաւ հասկնալու առաքեալին գործածած հզօր ու շնորհալի պատկերը: Նախ կը դիմէ Փիլիպ-

պիյի նորագարծներուն յիշեցնելով անոնց իրենց փառաւոր ու պատկառելի դերը իբրեւ Աստուծոյ քահանաները: Կ'երեւակայէ թէ անոնք զոհի սեղանին քով կայնած զոհաբերութեան պաշտօնը կը կատարեն, բայց զոհերը այծեր ու ոչխարներ չեն, այլ իրենց հաւատքը ու հաւատքին պտուղները: Ի՞նչ գեղեցիկ ու ներշնչիչ պատկեր: Քահանաները միայն պատեհ առիթներուն կրնային տաճարին մէջ ներկայանալ իրենց զոհերով, սակայն հաւատացեալներուն սեղանը՝ Ս. Հոգւոյն տաճարին, իրենց սիրտերուն մէջն էր, ուր կըրակը կրնար անդադար վառիլ ու զոհաբերութիւնը անընդհատ կատարուիլ: Քրիստոսի աշակերտները անկախ էին պաշտօնական քահանաներէն: Անոնցմէ իւրաքանչիւրը կրնար անուշաբոյր ճերմակներ հագած՝ իր զոհի սեղանին քով կայնիլ ու նուիրական կրակին վրայ զոհել իր կեանքին ու իր խորհուրդներուն պտուղները: Քրիստոնեայ քահանաներուն առանձնաշնորհումն է ամէն ինչ զոհել իրենց նուիրական սեղաններուն վրայ: Կրնանք զոհել մեր խորհուրդները, մեր նպատակները, մեր բաղձանքները, մեր սէրերը, մեր քաղաքավարութիւնը, մեր ընկերական խօսակցութիւնները, մեր տոբեայ աշխատանքը, մեր առօրեայ հացը, մեր պարագայ վայրկեանները, մեր վիշտերն ու մեր ուրախութիւնները: Կրնանք այս ամէնը մտքուր ձեռքերով սեղանին վրայ մատուցանել սրպէսզի մեր զոհին ծուխը գիշեր ու ցորեկ բարձրանալով՝ անոր կրակը երբեք չմարի, քանզի եթէ մեր առօրեայ կեանքի ընթացքին մեր ամէն գտածը Անոր նուիրենք, Տէրը նոր ու անգին գանձեր պիտի բանայ մեր առջեւ Իրեն զոհելու:

Փիլիպպէի քրիստոնէականները այսպէս կ'ընէին: Այդ հաւատացեալ քահանաներն ու քահանայուհիները իրենց զոհերը կը մատուցանէին, բանտապահը իր տունով, Լիտիա իր աղօթքի ընկերներուն հետ որ գետեղերքը կը հաւաքուէին: Ու Հռովմի մէջ բանտարկուած առաքեալը այնպէս կ'զգար թէ իր զոհը խառնուած էր Փիլիպպեցոց զոհին, կարծես միեւնոյն սեղանին վրայ կը մատուցանէին իրենց զոհերը եւ եթէ հաւատքի համար մեռնէր, իբրեւ զոհ պիտի թափուէր անոնց մատուցած զոհին վրայ: Մէկ զոհը միւս զոհին յաւելումովը կը ճոխանար ու առաքեալը Փիլիպպեցոց հետ միասին զէպի երկինք կը բարձրացնէր իր անուշահոտ ու Աստուծոյ ընդունելի պատարագը: Այս ամենուն պատրաստ էր ծերունի պատերազմիկը: «Պատրաստ եմ հիմա ընծայուելու»: «Թէպէտեւ ձեր հաւատքին պատարագին

ու պաշտօնին վրայ ընծայուիմ, կ'ուրախանամ»:

Արդ դիտենք թէ ինչպէս առաքեալը իր հաւատքի ընկերներուն խորհուրդ կուտայ իրարու զոհաբերութեանց մէջ փնտռելու եւ գտնելու իրենց ուրախութիւնը: «Կ'ուրախանամ եւ ձեր ամենուն ուրախակից կ'ըլլամ: Նոյնպէս ալ զուք ուրախացէք ու ինծի ուրախակից եղէք»: Ահա քրիստոնէական կեանքի աշխուժին ու յաղթութեան մէկ մեծ գաղտնիքը: Եղած չէ մէկը որ ինքզինքը զոհած ըլլալ առանց իր Տէրը ուրախութիւնը մտնելու: Չմոռնանք սակայն թէ մեր ուրախութիւնը աւելի եւս կը կրկնապատկուի երբ մեր զոհերը ուրիշներու զոհերուն հետ խառնելով զանոնք միեւնոյն սեղանին վրայ կը մատուցանենք: Ուրիշի մը ուրախութիւնը կը կազդուրէ մեր ուրախութիւնը եւ փոխադարձաբար կը զօրանայ ու կ'ոգեւորուի մերինէն: Երբ մեր Փրկիչը որբեւարիին երկու լումային զան-

ձանակը ձգուելը տեսաւ, ու գիտցաւ թէ այդ անոր համար արիւն թափել կը նշանակէր, արդեօք անոր այդ արարքը բաղդատութեան չղըրա՞ւ Գողգոթայի մօտակայ արարքին: Անշուշտ այնպէս ըրաւ Մեր Տէրը անշուշտ ուրախացաւ որբեւարիին զոհին վրայ՝ ինչպէս օրեր վերջը ան որբեւարին անտարակոյս յաւիտենական ուրախութիւն գտաւ Փրկչին զոհաբերութեան մէջ: Չոհաբերութեան հոգին նոյնն է, ու ամէն մէկ զոհ մատուցանող իր քահանայութեան պաշտօնը կը կատարէ միեւնոյն սեղանին վրայ: Մենք որ այս վերջին օրերուն կ'ապրինք, ամէն դարերու արիւն թափող սուրբերուն հետ մէկ ենք: Կրնանք ուրախակից ըլլալ մարտիրոսներու ամբողջ խումբին որ ամէն դարու իր գանձերը դրած է Աստուծոյ սեղանին վրայ զանոնք Աստուծոյ թագաւորութեանը համար զործածելով:

ՀԻՆԱԽՈՒՐՅ ՎԷՄԸ ԱՆՅԱՂԹ



Երբ կանցնէի դարբինի մը խանութին առջեւէն, Լըսեցի զիլ նուազը պնդածոյլ սալին.

Ներս նայելով տեսայ մուրճերն հալ ու մաշ ամէն, Յիր ու ցան, կոտրած կիսով, թափթփած գետին: — «Քանի՞ սալեր ունեցած էք որ այսպէս

Մաշեր, կոտրուեր են մուրճերն խմբովին» —

Հետաքրքիր, դարբինին հարցուցի ես:

— Լո՛կ մէկ հատ, ըսաւ դարբինն քթթելով աչուին, «Մուրճերն», յարեց նա, «կ'ընդունին պատիժ

պատուհաս,

Իսկ սալն կը կենայ ընդմիշտ հաստատ, անփնաս»:

...Վայրկեան մ'ինքնամփոփ ինկայ մտածման

մէջ խոր...

— Դարերո՞վ սկեպտիկ, անկըօն, բանաստեղծ,

հըռետոր,

Կայսր, Խալիֆա, Իշխան, ամիրա, թագաւոր,

Շահ, Փարաւոն, Սուլթան, Հերովդէս,

մութ ուժերն բոլոր,

Հուր, սուր, խաչ ու խարոյկ կանչեցին օգնութեան,

Հարուածներ տուին անխնայ, Հինաւորց

Վէժին սըրբազան.

...Հարուածներն ի սպառ բնաջինջ եղան,

Իսկ սուրբ Վէժը Հինաւորց, ապառաժի նման

Կը կենայ հաստատ, անվընաս, եւ պիտ մնայ

յաւիտեան:

(Իմաստը փոխ առնուած է)

ՅԱՐ. Խ. ՏՈՄՊԱԼԵԱՆ

Ծրէզնօ, Քալիֆ.



ՉԻ ԲԱԽԵՐ

Հարցուր Աղամին արտաքսման պահուն, Ինչո՞ւ կը հեծես, երջանիկ չե՞ս դուն.

— «Այո», ըսել Տէրոջ, զործել հակառակ,

Նա պիտ ըսէ քեզ՝ ըլլալ դրախտաբնակ

Չի բաւեր:

Արիմեղէք էր որ Աբրահամին

Ըսաւ, «Այդ ի՞նչ էր բերիւ վրաս իմին.

Հաւատքիդ խառնել սուտ մի աւամայ,

Առ ի գերծանիլ Հարէն ապագայ,

Չի բաւեր:

Հարցուր Մովսէսին, Է՞ր ընդհատեցաւ,

Մըտնելդ ի Քանան՝ հօտիդ ի մեծ ցաւ,

— Առաջնորդել զհօտ թերի ի մի բան,

Մեծ մեծ հրաշիւք մտնել ի Քանան

Չի բաւեր:

Հարցուր Դաւիթին, որ ընդ այգս այգուն,

Ինչո՞ւ կը ծախես քո հանգիստ եւ քուն.

Պիտ ըսէ, եթէ Տէրս ինձ չնեղէ,

Ըլլալս թագաւոր նաեւ մարգարէ

Չի բաւեր:

Սողոմոն կ'ըսէ, Աստուծոյ վախցիր,

Ընդունէ ընդմիշտ Անոր շնորհքն ձիր.

Բոլոր կեանքիդ մէջ քալէ անսայթաք,
Բայց երբ խոտորի, փառք, պատիւ եւ թագ
Ձի բաւեր:

Եթէ Յիսուսի պատգամին դիմես,
Պիտ տեսնես ընդհուպ, «Թըշնամիդ սիրես,
Միմիանց կը սիրեն մաքսաւորք եւ զողք»
Ոյց կողմէն սակայն մատուցուած աղօթք
Ձի բաւեր:

Ուրիշ պայման մը ներկողէմոսին,
Յոյց կուտայ Յիսուս, «Մընիլ վերստին»,
Խօսքերս զործադրել պէտք է կէտ առ կէտ,
Եթէ ոչ, կ'ըսէ, լինիլ վարդապետ
Ձի բաւեր:

Մարգարէք ամէն հրէից ազգին միշտ
Յայտնեցին իրենց զգացած ցաւն ու վիշտ,
Պաշտելնուն համար մունչ կուռքեր կերտել,
Եւ 'սին՝ Մովսէսի սեպուիլ աշկերտել
Ձի բաւեր:

Բանտէն հրաշիւք իմն ազատուած Պետրոս,
Քարոզեց իսկոյն զյարուցեալն Քրիստոս,
«Առաւել պէտք է Աստուծոյ անսալ»,
Ապա թէ ոչ 'սաւ, ձեզ մարդոցդ անսալ
Ձի բաւեր:

Հարցուր Պետրոսին ուրացման մասին,
Կեանքդ էր՞ չը տըլիւր ի սէր Յիսուսին,
«Առանց Սուրբ Հոգւոյն լեցուն զօրութեան,
Նա պիտ ըսէ քեզ լեալ յանձնապաստան
Ձի բաւեր:

Եթէ հարցընենք հերոս Պօղոսին,
Որ խօսի մեզ իւր պարծանաց մասին,
«Ես վասն աշխարհի եմ ի խաչ ելեալ,
Առանց սրոյ ինձ, կ'ըսէ, պարծենալ»,
Ձի բաւեր:

Յակոբոս՝ որպէս գործի Հատագով
Կ'երեւի ստէպ նա, զի խիստ խօսքով.
Բայց ի՞նչ կ'ըսէ նա, եթէ հաւատքին,
Չմիանան ո՞հ, ձեր գործք թանկագին,
Ձի բաւեր:

Տէրոջմէն սիրուած սուրբն Յովհաննէս,
«Մի նոր պատուիրան», կ'ըսէ «կուտամ ձեզ.
Սիրեցէք զմիմիայնս», զի առանց անոր,
Փըրկութեան համար ձեր միւս գործք բոլոր
Ձի բաւեր:

Յուդա առաքեալ հակիրճ նամակաւ,
Ամբարիշտներուն չհանդուրժեր բնաւ,
Կը թուէ անոնց յոռի վարմունքին
Տըխուր հետեւանքն. երբ չունին հոգին
Ձի բաւեր:

Հարցընեմ անձիս նաեւ հուսկ ապա,
Ինտո՞ր է արգեօք ապրած կեանքս ներկայ,

Գիտեմ, հաւատքիս հետ զուտ անբասիր
Եւ ջինջ յաղթական կեանք մ'երբ չեմ ապրիր,
Ձի բաւեր:

Ազնիւ ընթերցող, ինքզինքդ քըննէ,
Տէրոջ գալուստը խիստ մօտալուտ է.
Յաջո մարդկան թէպէտ կ'երեւիս հըլու,
Բայց երբ չես պատրաստ յափշտակուելու,
Ձի բաւեր:
Գ. ԶԱԲԱՐԵԱՆ

ՓՈՐՁՈՒԹԵԱՆՑ ԲՈՎԷՆ

ՈՎՍԱՆՆԱ



Սակայն ես միշտ Քեզի հետ եմ
Սող. ՀԳ. 23

Ովսաննա կը կոչուէր եւ Այնթապցի էր: Հայ-
րը 1893ի Համիտեան ջարդերուն սպաննուեցաւ
եւ իր մայրը վեց պզտիկներով անպաշտպան մը-
նաց: Ովսաննա թէպէտ չկրցաւ դպրոց երթալ,
բայց ամէն պատեհութիւն օգտագործելով հայե-
րէն արուբէնը սորվեցաւ:

15 տարեկան սիրուն աղջիկ մըն էր երբ ա-
մուսնացաւ, բաղդատաբար լաւ դիրքի տէր, նոյն-
պէս Այնթապցի առեւտրականի մը հետ: Ամու-
սինը յաճախ ստիպուած էր բացակայիլ տունէն
գործերու պատճառաւ: Բան մը՝ որ խիստ մտա-
հոգութեանց կը մատնէր դեռատի կիներ, որով-
հետեւ Թուրքիոյ մէջ այդ շրջանին յեղուգակնե-
րու հանդիպելու վախը կը տիրէր: Եւ իրօք ճամ-
բորդութեան մը միջոցին Փոքր Ասիոյ ներսերը
ամուսինը աւագակներէ յարձակում կրեց եւ
թէեւ կեանքը ազատեց, բայց բոլորովին կողոպ-
տուած, առանց դրամի ու ապրանքի տուն վե-
րադարձաւ: Առողջութիւնը սաստիկ խանգարուած
ըլլալով ժամանակ մը անդամալոյծ մնաց: Ովսան-
նայի ուսերուն վրայ դրուեցաւ իրենները խնա-
մելու պարտականութեան ծանր բեռը: Այնթա-
պի ասեղը օգնեց իրեն:

Երկու տարի վերջ ընդհանուր պատերազմը
պայթեցաւ, որուն յաջորդեց հայերու տեղահա-
նութիւնը: Ովսաննայի ամուսինը զինուոր դըր-
կուեցաւ, ոչ դէպի ճակատ, այլ լեռները՝ ուր հայ
զինուորներ, թուրք զօրքին տակ ծանր աշխա-
տանքներ կը կատարէին ու ճամբաներ կը շինէ-
ին, սնունդէ զուրկ, մինչեւ որ անօթութեամբ

մեռնին, եթէ գնդակ մը չկանխէր իրենց մահը:

Ովսաննա իմացաւ թէ ամուսինը մեռած է: Մանրամասնութիւններ չստացաւ. այսքանը բաւական եղաւ որ իր դժբաղդութիւնը կրկնապատկուի: Այսու հանդերձ բարեբաղդութիւնը ունեցաւ — ինք եւ իր երեք զաւակները — կարգ մը մենաշնորհեալ հայերու հետ Այնթապ մնալ, մինչ անթիւ ուրիշներ տեղահանուեցան:

Սակայն երբեք ապահով վիճակ մը չունէր: Թրքո-Ռուսական սահմանէն եկած թուրք գաղթականներ տեղաւորուած էին Այնթապի հայ տուններուն մէջ, որոնք բնական է գէշ աչքով կը նայէին հայոց վրայ: Ովսաննա միշտ ստիպուած էր պահել ինքզինք եւ պզտիկները եւ ծածուկ կերպով փնտռել պատապարտան: Ոչ թէ միայն տեղահանութեան եւ մահուան երկիւղը կը մտահոգէր զինքը, այլ իր երիտասարդ տարիքն ալ իսկական վտանգ մըն էր իրեն:

Գուցէ, նախապէս լոկ ձեւական աստուածավախութեամբ զոհանալով, երբեք չէր խորհած հոգեւոր կեանքը ճանչնալ: Իսկ հիմա բուն փափաք մը արթնցաւ իր մէջ զԱստուած փնտռելու: «Ա՛հ, եթէ գիտնալի ուր գտնել զԱստուած» կը կրկնէր անդադար: Օր մը փողոցէն անցած պահուն, քակուած գիրքի մը թերթիկները գտաւ ու դժուարութեամբ կրցաւ պարունակութիւնը կարդալ: Յորայ գրքէն հատուած մըն էր ուր Յորի կրած պէսպէս նեղութիւններու շարքը կը նկարագրուէր, որոնք այնքան սոսկալիօրէն զինք տապալած ըլլալով հանդերձ, ինք հաստատ հաւատքով եւ հաւատարմօրէն Աստուծոյ կառչած կը մնար:

Հաւատքը փոխանցիկ է: Ովսաննա ոյժ եւ քաջութիւն ստացաւ Յորի զօրաւոր հաւատքէն եւ ինք ալ իր Աստուծոյ աղաղակեց, «Տէր, Յորի պէս ես ալ ամէն ինչ կորսնցուցի, անոր պէս ես ալ անձկութեան մէջ եմ, բայց Քեզ, միայն Քեզ ունիմ Տէր» եւ երախտագիտութեան անհուն ըզգացում մը սղոցեց իր հոգին: Երբեմն կը պատահէր որ Այնթապի քաջածանօթ հաւատացեալ եւ Աստուծոյ աննկուն վկաներէն Աբրահամ Լեւոնեանի տունը գացած ըլլար, ուրկէ քաջալերութիւն եւ խաղաղութիւն ստացած կը մեկնէր:

Սակայն նոր պատուհաս մը իրեն կ'ապասէր: Քաղաքին թուրք բնակիչները իր ապաստանած պարապ հին տան մէջ վառելու փայտ փնտռելու կուգային: Դռներ, պատուհաններ զողնալէ վերջ, սկսան պատերու գերաններն ալ խել: Յանկարծ պատերէն մին փլաւ եւ խեղճ պզտիկներէն մին փլատակներուն տակը մնաց: Յուսահատ մայրը

ի զո՛ւր օգնութեան ճիշեր արձակեց: Թուրքերուն աղերսեց, որոնք սառնօրէն մերժեցին փլալտակները պեղել պզտիկը ազատելու համար: Ի՛նչ փոյթ հայ աղեկ մը ազատել, քանի որ անդին տասնեակ հազարներ մէթոսաւոր: զրութեամբ կը փճացուէին: Վերջապէս մի քանի թուրքերու գուլթը շարժեցաւ եւ դէպքէն մէկ ու կէս ժամ վերջը խեղճ տղուն անշնչացած մարմինը փլատակներէն դուրս հանեցին: «Ի՛նչ գեղադէմ տղայ էր, մեր միակ որդին էր» կ'ըսէր ինձ մայրը յուզմամբ: Բայց Ովսաննա անպամ մը եւս յիշեց Յորը ու ըսաւ, «Տէր, անցեալի մէջ Դուն զիս մխիթարեցիր, ինչպէս Յորը, անա ես ալ Յորին պէս առանց սրգիի եմ»:

Ոչ մէկը օգնեց պզտիկին անմիջական թաղման: Երեք օր վերջ, մի քանի հայ զինուորներ որոնք թրքական բանակին մէջ կը ծառայէին, զերկգմանը պատրաստեցին: Իր ամբողջ վիշաք չարդիւնց զինք այս դժնդակ օրերուն զարմանալի եւ սփոփիչ փորձառութիւն մը ունենալ: Այնպէս կը թուէր թէ երկիրք կը բացուէր եւ Աստուծոյ ներկայութիւնը կը տեսնէր ու տարօրինակ կերպով զգաց թէ Աստուած իրմէ լուսնադակ նուիրում մը կը սպասէր: Ուստի խոստացաւ միայն Անոր համար ապրիլ եւ ի նշան նուիրման վճեց զունաւոր զոհատ չհագնիլ:

Այս նեղութիւններուն յաջորդեց լոյսի ճառագայթ մը: Ովսաննա անակնկալ լուր մը ըստացաւ թէ ամուսինը կ'ապրի: Եւ արդարեւ թէ պէտ մինչեւ Տէր Զօր քշուած էր, բայց հրաշքով ազատուած էր, այնպէս որ երբ հալածանքները քիչ մը թեթեւցան, իր ընտանիքին մօտ եկաւ: Եւ դեռ աւելին: Աստուած նոր մանչ զաւակ մը տուաւ իրենց: Այսպէս կրցան քիչ մը շունչ առնել:

Բայց եւ այնպէս, Ովսաննա խոստովանեցաւ թէ այս ժամանակի ընթացքին իր ներքին հոգեւոր կեանքը զգալապէս սկսաւ յետադիմել: Ինք որ այնքան մօտեցած էր Աստուծոյ, սկսաւ անզգալաբար հեռանալ Անկէ, թէպէտ առանց ուղիւ, բայց հեռացաւ:

Ուստի Աստուած Իր աղիգործի դանակը գործածեց եւ իրենց սիրելի պզտիկը առաւ: Այն տեսն Ովսաննա աւելի լաւ ըմբռնեց այն դասը, որ Աստուած իրենց կուտար, քան իր ամուսինը, որ դառնացած էր Աստուծոյ դէմ:

«Այլեւս որդի պիտի չունենամ» կը կրկնէր: Ովսաննա միշտ Ամենակարողին մասին կը խօսէր եւ Աբրահամի օրինակը կը յիշէր, որուն Աստուած ձերութեան ատենը Իսահակ մը տուած

էր: Բայց ամուսինը ոչինչ կ'ուզէր լսել: Սակայն տարի մը վերջ Ուսաննա մանչ դաւակ մը ծնաւ: Ամուսնոյն առողջութիւնը խիստ վատթարացած էր եւ Ուսաննա ստիպուած էր գիշեր ցորեկ տքնաջան աշխատիլ ընտանիքին խեղճ օրապահիկը ճարելու համար: Նեղութիւններ եւ փորձութիւններ չէին նուազիր: Այնքան փափաքուած նորածինը տկար եւ հիւանդոտ էր եւ հազիւ վեց տարեկանին մեռաւ: Յետոյ ամուսինն ալ մեռաւ: Իսկ ընտանիքին մնացած մասը քշուեցաւ հեռո՛ւ դէպի անծանօթ: Այսուհետեւ այս խեղճ կինը իր գոյութիւնը պիտի կցեր զալթականներու այն հսկայ զանգուածին որոնց միեւնոյն տխուր կեանքի պայմանները վիճակուած էին:

Բայց Ուսաննայի հաւատքը բեկում չունեցաւ: Ան ամէն մի փորձութիւն աստուածային ալցելութիւն մը կը նկատէ: «Աստուած զիս ալցեցէ», կ'ըսէ յաճախ, «ալցեցէ որպէսզի զիս իր սրտին մօտեցնէ»: Կը խոստովանի անկեղծօրէն թէ զիւրին բան չէր սկիզբը տոկալ փորձութեանց, բայց աստիճանաբար ըմբռնեց Աստուծոյ անհուն սէլը նոյնինքն տառապանաց մէջ: Փորձով հասկցաւ թէ Աստուած ամէն բանէ առաջ իր ներքին հոգիին փրկութիւնն ու հանգիստը կ'ուզէ: Մեզ կը վստահացնէ թէ հիմա իր մէջ կը կրէ անարտայայտելի մեծ ուրախութիւն մը: Ո՛չ, չկրնար ըսուիլ թէ հիմա, զիւրին կեանք մը ունի. հակառակ իր մշտնջենական գլխու ցաւին եւ աչքերու տկարութեան՝ ստիպուած է ձեռագործներ շինել ապրուստ հայթայթելու համար: Հոգեւոր փորձութիւններ ալ չեն պակսիր որոնք երբեմն կը յարձակին եւ տարակոյտ կը ներշնչեն եւ կը մղեն զինք խորհիլ թէ՛ միթէ՞ իրօք այս բոլոր նեղութիւններն ու տառապանքները Աստուծոյ սիրոյն ապացոյցն են: Սակայն այս փորձութեանց կը պատասխանէ, «Ետիս գընա Սատանա», եւ Յիսուսի նայելով կ'ըսէ, «Այո, ամէն բան կորսնցուցի, բայց Քրիստոսը գըտայ»: Ո՛չ, չկարծուի թէ բոլորովին գոհ է իր հոգեւոր կեանքէն ու յառաջդիմութենէն: Մեզի պատմեց թէ վերջերս ազօթածողովի մը մէջ, «Ուստի դուն որ դաղջ ես, ու ոչ տաք եւ ոչ ալ պաղ, քեզ բերնէս դուրս փսխելու վրայ եմ» Յայտ. Գ. 16, պատգամը զինք խորապէս տպաւորեց եւ ցոյց տուաւ թէ ինք տակաւին գաղջ էր եւ պէտք էր աւելի կատարեալ կերպով նշնորդուիլ:

Իր միակ եւ ամենամեծ ուրախութիւնն Աստուծոյ համար վկայել է: Իր սրտին վրայ շատ



ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Ծնած եմ Խարբերդի նահանգին Խարէսիկ գիւղը: Կը սերիմ բողոքական ընտանիք մը: Ունէի հայր, մայր, երեք եղբայրներ, ընտանիք եւ զաւակներ, ամէն բան: 1911ին եւ 1912ին երկու եղբայրներս Հար. Ամերիկա գացին: 1913ին իմ զինուորութեանս ատենը ըլլալուն, հայրս զիս ալ զրկեց եղբայրներու քով: Հազիւ կէս տարի միասին մնացինք, երկու եղբայրներս երկիր գացին եւ 14 անցով գոհ գացին: Հաւատացեալ հայրը՝ զիտցեր է որ պիտի զարնեն զինքը, քաղելով գերեզմանատուն: Կացեր է եւ ձեռքերը վերցուցած ազօթած է: Այդ պահուն նա ետեւէն հըրացանով զարնուած ինկած է: Չեմ մոռնար սիրելի ծնողքս: Գիւղէն ելած օրս առաւօտուն կանոխ հայրս զիս գիւղէն դուրս բերաւ վազող ջուրի աղբիւրի մը քով, լալով զիս համբուրեց եւ ըսաւ, «Տղաս, գնա, Աստուած հետդ ըլլայ»: Այնպէս զատուեցանք իրարմէ ընդմիջտ: Կը հաւատամ որ անոր ինծի համար ըրած ազօթքներուն ի պատասխան ես Աստուծմէ ողորմութիւն գտայ: Փառք իր անուանը:

Գորտոպայ եղած ատենս Նոր Կտակարան մը գնեցի եւ շարունակ սկսայ կարդալ: Անկից ալ Հիւս. Ամերիկա Շիքակօ քաղաքը գացի: Հոգեւոր ծնունդս հոն եղաւ, անոր համար շատ կը յիշեմ: Հրեայի մը հօթէլը կ'աշխատէի որ ստիպեց զիս կիրակին աշխատիլ: Ըսի թէ այդ անկարելի է: Ուստի գործս ձգեցի ելալ եւ փնտոցի գործ մը որ ստիպուած չըլլամ կիրակին աշխատելու: Եկեղեցիները եւ ժողովները շատ կը սիրէի եւ ա-

հոգիներ կան որոնց համար կ'աղօթէ: Եւ շատ է թիւը անոնց որոնց հոգեւորապէս օգնած է: Եւ ինչո՞ւ չէ, քանի որ մեր Տէրն ալ փորձուեցաւ եւ տառապանքի մէջ փորձանաւորներուն օգնական եղաւ Եբր. Բ. 18: Արդ, Ուսաննա ալ կըրնայ մխիթարել զանոնք որոնք նեղութեան մէջ են, այն մխիթարութեամբ, որով ինք մխիթարուեցաւ Աստուծմէ: Բ. Կոր. Ա. 4:

DR. P. BERRON

«Le Levent»

նոնց կը հետեւէի: Այսպէս իւր անառակ որդի լալով եւ արցունքով իրեն գացի եւ ապաշխարեցի եւ հաւատալով մկրտուեցայ իր անունովը մեղքերու թողութիւն գտայ եւ իր արիւնովը, մաքրեց զիս եւ ներեց իմ շատ մեղքերս: Փառք իր անուան: Ինչպէս Պօղոս առաքեալ (Հռով. 2, 3) կ'ըսէ թէ մենք որ Բրիստոսով մկրտուեցանք, Անոր մահուանը մկրտուեցանք, Անոր հետ թաղուեցանք մկրտութիւնով մահուան համար: Աստուած զիս, անարժան ծառաս խրատեց մէկ երկու անգամ: Երբ զինադադար եղաւ, Պօլիս դացի ընտանիքս փնտռելու: Ուր որ կ'երթայի, եկեղեցին կը գտնէի եւ անգամ կ'ըլլայի: Հոն վկայութեանս մէկը կ'ըլլար Հոգ. Երգարանէն 159րդ երգը: «Ի՛նչ գէշ էր իմ վիճակս, երբ Տէրը զիս տեսաւ... մահուան շատ մօտ գտաւ զիս, գերեզմանէն հանեց, որ խեղճ մարդոց պատմեմ ես, ինտոր զիս բժշկեց»: Մէկն ալ ինթիպահ իւլահիյէն 425րդ երգը, «Շրջեցայ Տէր իմ ծով ու ցամաք, փորձեցի լեռ, ձոր ու դաշտ ահ շարունակ, զիտեցի լուսին, արեւ, աստղերն ի սփիւռս, սարսեցայ կոհակներու կոծումէն բիւր, չըգտայ ով Տէր Յիսուս, Քեզմէ ի զատ խօսող հոգեւոյս, Քեզմէ ի զատ, Քեզմէ ի զատ»:

Անկէ յետոյ Պէյրութ գացի. մինակ ինծմէ պզտիկ եղբայրս գտայ, ընտանիքով ու երկու պզտիկներով Պուէնէս Այրէս ղրկեցի: Ես ալ Աստուծոյ կամքով ամուսնացայ 1930ին եւ երկու պզտիկներով Պ. Այրէս եկայ, հիմա չորս զաւակներով հոս կը մնանք: Աստուած մեզ յետիններս պահեց, փառք իր անուանը հիմա եւ միշտ: Ազօթքս է, Ամէն Տէր Յիսուս, շուտ եկուր: Քու թագաւորութիւնդ գայ, Քու կամքդ ըլլալ, ինչպէս որ երկինքը, անանկ ալ երկրիս վրայ:

Բարեւելով այն ամէնը որոնք այս վկայութիւնս կը կարդան, կը մնամ Տէր Յիսուս Քրիստոսով ձեր եղբայրը,

ԳՐԻԳՈՐ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Պ. Այրէս

Սպասելով սպասեցի Տէրոջը, ու ծոցեցաւ ինծի լսեց իմ ապագակս: Եւ զիս կորստեան փոսէն ու տղմալից կաւէն հանեց եւ ոտքերս վէմի վրայ ամուրցուց ու քալուածքս հաստատեց: Եւ բերանըս դրաւ նոր երգ մը, մեր Աստուծոյն գովութիւնը: Շատերը պիտի տեսնեն ու պիտի վախնան ու Տէրոջը պիտի յուսան: Շատ են սքանչելիքներդ զորոնք Դուն ըրեր ես ով իմ Տէր Աստուածս... համբանքէն աւելի շատ են: Սաղ. 104-5



Ս. ԳՐԱԿԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝ SCOFFIELD ԷՆ

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

“ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՍ ՄԱՐԴԷ,,

oo—oo—oo

Մեր Տէրը «Որդի» մակդիրով երեք անուններ կրեց: 1. Աստուծոյ Որդի իբր իր Աստուածային անունը: 2. Դաւիթի Որդի իբր իր հրէական անունը. եւ 3. Որդին Մարիոյ իր անունը իբր մարդկութեան ներկայացուցիչը Ա. Կոր. ԺԵ. 43-47 ի իմաստով: Այս վերջին անունով Յիսուս ինքզինքը մօտ 80 անգամներ կը բնորոշէ: Աւելի մասնակիորէն Նա այս անունը կը գործածէ՝ երբ կ'ուզէ ցուցնել եւ շեշտել թէ իր պաշտօնը (Մատթ. ԺԱ. 19, Ղուկ. ԺԺ. 10), իր մահը եւ յարութիւնը Մատթ. ԺԲ. 40, Ի. 18, ԻԶ. 2), եւ իր երկրորդ գալուստը (Մատթ. ԻԴ. 37-44, Ղուկ. ԺԲ. 40) սահմանով եւ արդիւնքով հրէական բոլոր ակնկալութիւններն ու սահմանափակութիւնները կը գերազանցէ: Երբ Նախնայէլ զԱյն կը դաւանի իբր «Իսրայէլի թագաւորը», մեր Տէրոջը պատասխանն է, «Ասկէ աւելի մեծ բաներ պիտի տեսնես... Աստուծոյ հրեշտակները որ կ'հլլեն ու կ'իջնեն Որդւոյ Մարիոյ վրայ»: Այս անունով է նաեւ որ Նա իշխանութիւն ունի տիեզերական դատաստան տեսնելու, Յովհ. Ե. 22-27: Այս անունը կը ցուցնէ նաեւ թէ իր մէջ կը կատարուի Հին Կրտակարանին մէջ նախատեսուած օրհնութիւնը գալիք մարդու մը ձեռքով բերուելիք»: (Ծննդ. Ա. 26, Գ. 15, ԺԲ. 3, Սաղ. Ը. 4, 2, 17, Եսայ. Լ. 14, Թ. 6, 7, ԼԲ. 2, 2աք. ԺԳ. 7):

Բայց Քրիստոսի կուսական ծնունդով մարդկութիւնը Անոր Աստուածութիւնը չկորսնցներ, հապա Նա կը դառնայ «Էմմանուէլ» Աստուած մեզի հետ: Փիլ. Բ. 6-8ը չըսեր թէ Յաւիտենական Բանը ինքզինքը իր Աստուածային բնութենէն կամ յատկութենէն պարպեց, հապա միայն Աստուածութեան արտաքին տեսանելի յայտնութենէն: Նա ինքզինքը պարպեց, ունայնացուց իր վեհափառութեան պատուանշաններէն: Երբ հարկը պահանջեց, Նա իր Աստուածային յատկութիւնները ի գործ դրաւ: Յովհ. Ա. 1 ի մէջ ԲԱՆ թարգմանուած յունարէն բառը «Լօգոս», կը նշանակէ «խորհուրդի մը յղացումը եւ այդ խոր.

հուրդին արտայայտութիւնը տեսքով կամ խօսքով: Այսպէս է որ Քրիստոս Աստուծոյ «Հօգոս»ն է, վասնզի Անոր մէջ (Աստուծոյ) իմաստութեան եւ գիտութեան բոլոր զանազանը պահուած են ու նաեւ իրմով կը յայտնուին: Նա Աստուծոյ լման եւ հաւաքական խորհուրդն է (Ա. Կոր. Ա. 24, Եփես. Գ. 9-11, Կող. Բ. 2, 3):

Բայց որովհետեւ Նա ուղեց մեր «Փրկութեան Առաջնորդը» ըլլալ, եւ «որովհետեւ զաւակները մարմինն ու արիւնին հաղորդ եղան, ինք ալ նմանապէս անոնց բաժանորդ եղաւ, որպէսզի իր մահովը...» (Եբր. Բ. 10-15): Այս մահ բաժն է միակ բացատրութիւնը Քրիստոսի մարդկութեան: Աստուծոյ Որդին մարդու Որդի եղաւ որպէսզի մեղաւոր մարդկութեան մահուան դատապարտութիւնը կրէ: Մահը Աստուծոյ համար չէ, հապա մեղաւոր մարդոց համար: Յիսուս միայն իբր Աստուած՝ չէր կրնար մեռնիլ. Աստուած չմեռնիր: Ասոր համար Նա Որդին մարդոց եղաւ, որպէսզի իրեն համար մեռնիլը կարելի ըլլար: Այս մահը փոխաբերական եւ զոհաբերական մահ մըն է: ա. 2-ի առաջին ակնարկութիւնը Ծննդ. Գ. 24-ն է. կաշիէ հանդերձներ շինուեցան անկասկած մորթուած անասուններէ: Իսկ առաջին ողջակէզի պատարագը Ծննդ. Գ. 4-ն է, Եբր. ԺԱ. 4-ի մէջ բացատրուած: Արեւի արդարութիւնը ոչ թէ իր նկարագրին արդիւնքն էր, հապա իր ողջակէզին: ք. Օրէնքին տրուելէն առաջ ամէն ընտանիքի գլուխը ընտանիքին քահանան էր: Օրէնքը հաստատեց քահանաներու դաս մը, որոնց միայն արտօնուեցաւ զոհերը մատուցանել: Այս զոհերը շուքեր, օրինակներ էին որ զանազան կերպերով զայն մատուցանողին առկաստուած յանցաւորութիւնը եւ կարօտը կը ցուցնէին: Անոնց ամէնն ալ զէպի Քրիստոս կը մատնանշեն եւ Անոր մէջ կը կատարուին: Այսպէս օրինակներով նախատեսուած եւ Նոր Կտակարանով բացատրուած Քրիստոսի հոգեւորը.—

ա. Պատժական է (Գաղ. Գ. 13, Բ. Կոր. Ե. 21): Մեղքի պատարագը (Ղեւտ. Գ. 3) թէեւ Քրիստոսը կը ցուցնէ, բայց կը ցուցնէ զԱյն բեռնաւորուած հաւատացողին մեղքով, բացարձակապէս մի միայն մեղաւորին աեղ եւ անոր փոխանորդաբար. եւ ոչ թէ անուշահոտ պատարագներով մէջ եղածին նման իր սեփական կատարելութիւններովը: Հոս Քրիստոսի մահը կը ցուցուի ինչպէս ան պատկերացուած է Եսայ. ԾԳ. Մաղ. ԻԲ. Մատթ. ԻԶ. 28, Ա. Պետ. Բ. 24, Գ. 18-ի մէջ: Բայց հրաշալի է նկատել թէ նոյնիսկ երբ Քրիստոս մեր մեղքի պատարագը կ'ըլլալ, երբ Աստուած զԱնիկա «մեզի համար մեղք ըրաւ», հոգ իսկ Անոր

կենսական սրբութիւնը անաղարտ պահուած է (Ղեւտ. Զ. 24-30):

բ. Քրիստոսի զոհութիւնը փոխանորդական է (Ղեւտ. Ա. 4, Եսայ. ԾԳ. 5, 6, Բ. Կոր. Ե. 21, Ա. Պետ. Բ. 24): «Սեպում»ը (imputation) Աստուծոյ այն արարքն է որով Նա Քրիստոսի արդարութիւնը Անոր հաւատացողին հաշույն կ'անցնէ, վասնզի Քրիստոս հաւատացողին մեղքերը կրելով օրէնքին պահանջը լրացուց (Յակ. Բ. 21-23): Ասիկա կատարեալ կերպով պատկերացուած է Փիլիմոն 17, 18-ի մէջ, «Ընդունէ զանիկա որպէս թէ զիս (իմ արժանիքս անոր սեպէ), «եթէ քեզի անիրաւութիւն մը ըրած է կամ պարտք մը ունի, զայն իմ հաշիւիս անցուր»:

գ. Քրիստոսի զոհութիւնը կամովին է (Ծննդ. ԻԲ. 9, Յովհ. Ժ. 18):

դ. Քրիստոսի զոհութիւնը փրկարար է (Գաղ. Գ. 13, Եփես. Ա. 7, Ա. Կոր. Զ. 20): Փրկութեան ամենազեղեցիկ եւ կատարեալ օրինակը Եւրից գիրքն է (Եւրից ԺԴ. 50): Այս գիրքը փրկութեան գիրքն է եւ կը սորվեցնէ 1. Փրկութիւնը բոլորովին Աստուծոյն է (Եւրից Գ. 7, 8, Յովհ. Գ. 16): 2. Փրկութիւնը անձի մը միջոցաւ է (Եւրից Բ. 2, Յովհ. Գ. 16, 17): 3. Փրկութիւնը արիւնով է (Եւրից ԺԲ. 13, 23, 27, Ա. Պետ. Ա. 18): 4. Փրկութիւնը զօրութեամբ է (Եւրից Զ. 6, ԺԳ. 14, Հոով. Ը. 2, Եսայ. ԾԺ. 20, Հոով. Գ. 24): Փրկութիւնը կը նշանակէ «փրկագին մը վճարելով ազատել». եւ այս տեսակէտէն Նոր Կտակարանին մէջ փրկութեան համար գործածուած յունարէն բնագիր երեք բառերը հրաշալի են: 1. «Ախորագո» կը նշանակէ «շուկայէն ծախու առնել»: ճիշդ խորհուրդը գերիններու շուկան կը նշանակէ: Ծախու առնուելիք գերինները «մեղքի տակ ծախուած» են (Հոով. Է. 14), բայց ասկէ ալ աւելին՝ անոնք մահուան վրճիռին տակ են (Եզեկ. ԺԸ. 4, Յովհ. Գ. 18, 19, Հոով. Գ. 19, Կող. Գ. 10) եւ զանոնք ծախու առնելու համար կտրուած գինը փրկողին արիւնն է որ իրենց տեղը կը մեռնի (Գաղ. Գ. 13, Բ. Կոր. Ե. 21, Մատթ. Ի. 28, Մարկ. Ժ. 45, Ա. Տիմ. Բ. 6, Ա. Պետ. Ա. 18):

2. «Էլզախորագո» «Գնելէն յետոյ շուկայէն դուրս հանել»: Փրկեալները ալիւս երբեք ծախու պիտի չհանուին:

3. «Ալթիֆիլոս», «կապերը քակել, գինը վճարելով ազատ արձակել» (Յովհ. Ը. 32, Գաղ. Գ. 4, 5, 31, Ե. 13, Հոով. Ը. 21):

Փրկութիւնը զոհով եւ զօրութիւնով է. Քրիստոս գինը վճարեց եւ Սուրբ Հոգին մեր մեղքէ ազատութիւնը գործնական, փորձառական իրողութիւն մը կ'ընէ (Հոով. Ը. 2):



ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՆՇԱՆՆԵՐ

ՀԵԹԱՆՈՍԱՑ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ(1)

Գանիէլ Բ.

ԱԶԳԵՐՈՒՆ ԱՐԹՆԱԼԸ.—

Մեր Տէրը առաջուրնէ արդի ազգայնականութեան արթնութեանը մասին խօսած է, «Տեսէք թղենին եւ ամէն ծառերը, երբ կը բողբոջին, տեսնելով դուք ձեզմէ կ'իմանաք թէ ամառը

ե. քրիստոսի զոհուիլը քաւարար է (Հոով. Գ. 23): Օրինաց գիրքերու մէջ քաւութիւն թարգմանուած բառը (Ելից Իթ. 33) կը նշանակէ «ծածկում»: Աստուած թոյլ տուաւ որ մեր մեղքերը ծածկուին զոհերու արիւններով: «Վասնզի նոխազներու ու ցուլերու արիւնը չկըր նար մեղքերը վերցնել» (Եբր. Ժ. 4): Իսրայէլացիին ողջակէզ նուիրելը կը պարունակէ մեղքի խոստովանութիւն եւ անոր բնական հետեւանքը եղող մահը: Աստուած «ծածկեց» վրայէն անցաւ» (Հոով. Գ. 23) մեղքին: Քրիստոսի յետագայ զոհին արիւնը վերջնականապէս մ'էկդի կ'ընէ մեղքերը, որ «Աստուծոյ երկայնատևութեան ատենները առաջուրնէ գործուած էին» (Հոով. Ե. 23, Եբր. Թ. 15):

Գ. քրիստոսի զոհուիլը հաշտարար է (Բ. Կոր. Ե. 18, 19, Կող. Ա. 21, 22):

Ե. քրիստոսի զոհուիլը կարող ազդու է (Յովհ. ԺԲ. 32, 33, Հոով. Ե. 9, 10, Բ. Կոր. Ե. 21, Եփես. Բ. 13, Եբր. Թ. 11, 12, 26, Լ. 10-17, Ա. Յովհ. Ա. 7, Յայտ. Ա. 5): Պղնձէ սեղանը որ օրինակն է խաչին որուն վրայ «մեր կատարեալ ողջակէզը Իր անձը անարատ պատարագ մատուց Աստուծոյ» քաւութիւնին կրկնապատիկ բարձրութիւնը ունէր, ցուցնելով այսպէս թէ Քրիստոսի զոհը մեզ փրկելէն առելին կ'ընէ. անիկա զԱստուած կը փառաւորէ:

Ե. քրիստոսի զոհուիլը յայտնական է (Յովհ. Գ. 16, Ա. Յովհ. Դ. 9, 10):

«ԱՅՍ ԲԱՆԻՆ ՄԷՋ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ ՄԵՐ ՎՐԱՅ ՅԱՅՏԵՒ ԵՂԱՒ...»:

մօտ է» (Ղուկ. ԻԱ. 29, 30): Թղենին Իսրայէլն է, միւս ծառերը հեթանոսական ազգերն են: Ուշադրութեան արժէք անոնց նոր կեանքի նշանները:

1. ԻՄՐԱՅԷԼ.— Մէկ դար առաջ ամբողջ Պաղեստինի մէջ միայն 500 հրեայ կար: Ներկայիս կայ 160,000 (այսինքն 1929ին, մինչ 1936ի վախճանին 400,000էն աւելի կը հաշուուէր Պաղեստինի հրեաներուն թիւը): Ասոնցմէ 400.000էն աւելին (ներկայիս 350.000էն աւելի) Պաղեստին մը տած են համաշխարհային մեծ պատերազմէն ի վեր: Հոն գաղթելը սկսած է 1882ին: Պաղեստինը վերահաստատուելու դիտումը ունեցող նոր (1929) համաձայնութիւն մը աշխարհի հրեաներուն միանալու ճամբան կը բանայ: Անգլիոյ Լօրտ Մէլքթ ծանօթ դրամատէրը վերջերս 500.000 տօլար տուած է Պաղեստինի գաղթային գործին: Մուսուլէն Հայֆա քարիզի փոխադրութեան խո. ղովակներ եւ երկաթուղիի գիծ մը շինելու վրայ են ու Պաղեստինի կառավարութիւնը Հայֆան մեծ նաւահանգիստ մը պիտի ընէ եւ արդէն գործը սկսուած է: Յորդանանի ջրային ելեքտրական գործարանները 1929ի վախճանին կամ 1930ի ըսկիզբները ոյժ պիտի արտադրեն. անոր հետեւանքով մեծ թիւով նոր գործարաններ երեւան պիտի դան: Եբրայական համալսարանը կը զարգանայ մեծ արագութեամբ: Երբ ժամանակը գայ, տաճարը Երուսաղէմի մէջ պիտի վերաշինուի եւ այս նպատակաւ հրեաները արդէն մարդիկ կը դաստիարակեն քահանայական պաշտօնին համար: Այժմ Անգլիան է որ կը զրուէ երկիրը գալիք օրուան պատերազմին համար:

2. ԵԳԻՊՏՈՍ.— 1869ին Սուէզի ջրանցքը բացուելէն ի վեր պատմութեան հրաշալիքներէն մէկը եղած է Եգիպտոսի զարգացումը: Բրիտանական զրաւումը սկսաւ 1882ին եւ այդ ժամանակէն Եգիպտոսի հարստութիւնը շատ աւելցած է: Երկրին վարչները մեծ բողձանքով իրենց ինքնօրէնութիւնը կը փնտռեն, բայց Եգիպտոսի գաւազանը վերցուած է (Եգեկ. Ժ. 11) եւ այլեւս երբեք եգիպտացի բնիկ իշխան մը պիտի չըլլայ երկրին մէջ, ոչ ալ լման անկախութիւն մը մինչեւ որ Տէրը գայ (Եգեկ. Լ. 13): Մեծն Բրիտանիա պէտք է իր իշխանութիւնը պահէ Եգիպտոսի

.....

(1) Ասիկա գրուած է 1929ին. զայն կը ներկայացնենք ընթերցողներուն որպէս հետաքրքրական բացատրութիւններ, որոնք կրնան շիտակ ըլլալ: Արդէն այս տնտեսութիւններէն ոմանք հիմա իրականացած են:

մէջ, կարենալ պապականելու համար Ափրիկէի եւ Արեւելքի իր ընդարձակ կայսրութիւնը: Ասով մէկտեղ անիկա Եգիպտոսը պիտի կորսնցնէ երբ Ռուսիան երկիրը կոխէ: Անգլիան նաեւ պիտի կորսնցնէ Պաղեստինը (Դան. ԺԱ. 40-43):

3. ՍՈՒՐԻՍ.— Սուրիան սկզբնաբար «Հիւսիսի երկիրն» է (Դան. ԺԱ. 6-15): Անիկա պէտք է անկախ դառնայ եւ իր յատուկ թագաւորը ունենայ, բայց անոր ետեւ պիտի ըլլայ վերջին «Հիւսիսի թագաւոր»ը, ապագայ Ռուսիոյ Չարր (Դան. ԺԱ. 40): Սուրիոյ Ժողովուրդը միշտ խոտովեալ է: Ֆրանսան զոյն կառավարելու միջոցը չգտաւ: Ելքը պարզ է, ճամբան որ հոն կը տանի, անստոր է: Մենք պէտք է հսկենք թէ ինչ պիտի պատահի Սուրիոյ:

4. ԻՐԱԿ.— Այս երկիրը, ընտիր Միջագետքը շատ բարգաւաճելու վրայ է, թէեւ շատ ըմբոստ դիրք մը ունի Բրիտանական մանտային տակ: Հին ջուրի ճամբաները լաւ մը նորոգուած են, որ ցորենի, բամպակի եւ պտուղի առատ արդիւնաբերում մը կ'ապահովէ: Հոս Բաբելոն վերստին պիտի շինուի անցեալինէն շատ աւելի մեծ փառքով եւ շքեղութեամբ մը: Այս կերպով ճամբան պիտի պատրաստուի ուր հին հեթանոսութիւնը իր վերջնական կատաղութեամբ եւ սատանայական զօրութեամբ պիտի յարձակի «մարգարէութեան երկրին» վրայ: Այն ատեն պապականութիւնը բոլորովին հեթանոսացած ըլլալով պիտի իշխէ իր վերահաստատուած զահէն (Հոովմ քաղաքին բոցերու տրուելուն պատճառաւ անկէ փախչելէն հտք Զաք. Ե. 9-11, Յայտ. ԺԷ. 16): Իրագը իր յատուկ թագաւորը ունի որ Հիւսէյններ կոչուող արաբ փառամոլ ընտանիքին անդամներէն է, որուն վրայ ոմանք կը նային որպէս Նեոլ որ պիտի գայ, բայց ասիկա անկարելի է: Նշանակալից է որ հին Բաբելոն, հեթանոսաց շրջանին վախճանին սկիզբը, դարձեալ արաբիսի իշխանութեան մը տակ է, որուն խորհրդանշանը առիւծ է:

5. ՊԱՐՍՅԱՍՏԱՆ.— Հպարտութեան եւ զօրութեան աթոռ եղող այս հին երկիրը, որ երկար ժամանակ իսլամութեան լծացման եւ ալլաքերման ենթարկուած էր, կրկին նշաններ ցոյց կուտայ: Երկաթուղիի գիծ մը կը շինուի որ երկրին հիւսիսէն հարաւ պիտի կտրէ անցնի, եւ իր զըլխաւոր քաղաքները պիտի բանայ արդի վաճառականութեան: Իր քարիւղի եւ ուրիշ բնական հարստութեանց անհուն աղբիւրները գինք պիտի պատրաստեն Ռուսիոյ դաշնակիցներէն մէկը

ԸՆԼԱՆ անոր պաղեստին ընելու արշաւանքին ատեն (Եգեկ. ԼԸ. 5):

6. ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼԻՔ.— Դիտողներուն համար ակներեւ է, որ Հնդկաստան, Չինաստան, Ճափոն եւ Մալէզիա արագ բարգաւաճելու վրայ են: Հնդկաստանի ներկայ բորբոքումը գալիք կռուի մը նշանն է, երբ հաւանաբար Մեծն Բըրիտանիոյ համար կորսուած ըլլալով, այս երկրը պիտի կազմէ «Արեւելքի թագաւորներէն» մէկը որոնք Պաղեստինը պիտի կոխեն (Յայտ. ԺԶ. 12): Չինաստան եւ չափոն անտարակոյս Ռուսիոյ պիտի միանան, ճերմակ ցեղի կայսերականութեան դէմ իրենց ունեցած ծրագրով: Հնդկաչինի եւ Մալէզիոյ ընդարձակ երկիրները, որ Հափազանց հարուստ են քարիւղով, անտառներով եւ քառիւղով, կրնան հոմ նիւթ հայթայթել Պաղեստինի դէմ ելլող հիւսիսային արեւելքի մեծ դաշնակցութեան համար: Անոնց ներկայ բարգաւաճումը երթալով աւելի զարմանալի է:

7. ԹՈՒՐԿԻԱ.— Թուրքիոյ արդիականացումը, Բէմալ Աթաթիւրքի ազդու վարչութեան տակ, արագ կերպով կը յառաջանայ: Մուհամէտի լուսնի տոմարին տեղ Գրիգորեան տոմարը դնելը, Խալիֆէութեան, Ֆէսի եւ հարէմի ջնջումը, ինչպէս նաեւ արաբական գիրերու լատինականի զարմանալի փոխանցումը, Թուրքիոյ մէջ կատարուած մեծ փոփոխութեանց օրինակներ են: Այս երկիրը երկար շրջանի մը յետադիմութենէ հտք, 1828էն ի վեր նահանգ նահանգի ետեւէ կորսնցնելով, թերեւս մարգարէական տեսակէտով իր վերջնական սահմանին հասած է: Թուրքիա պէտք է կազմէ վերակենդանացած Հոովմէական կայսրութեան տասը թագաւորութիւններէն մէկը, բայց վախճանը գալէն առաջ «հիւսիսի ծայրերէն եղող Թորգոմայի տանը» պէս Ռուսիոյ դաշնակիցներէն մէկը պիտի ըլլայ:

Վերականգնեալ Հոովմէական կայսրութեան աչքառու նշաններէն մէկն ալ երկու մայրաքաղաք ունենալն է, սակայն միեւնոյն ատեն միայն մէկ հատ: Դանիէլի Խթանաստուներորդ շարթըւան առաջին մասին ատեն Հոովմն է որ մայրաքաղաք պէտք է ըլլայ, մինչեւ իր կրակով ոչնչացումը: Յետոյ Բաբելոն (եւ ոչ Կ. Պօլիս) պէտք է ըլլայ իր երկրորդ մայրաքաղաքը: Այսպէս շատ նշանակալից է որ Կ. Պօլիս Թուրքիոյ մայրաքաղաք ըլլալէն ձգուեցաւ եւ հիմա անկման մէջ է: Աշխարհին մեծ պատերազմն էր որ այս բանին ճամբան բացաւ:

8. ՅՈՒՆԱՍՏԱՆ.— 1828ին Թուրքիոյ լուծէն ա-

ՊԱՏԱՆԵԱՅ

ՏԻՊԱՐ ԱՇԱԿԵՐՑՆԵՐ



Հոկտեմբերի սկիզբն էր: Ուսումնարանները վերաբացուած էին: Այդ օր Ք... դպրոցին մէջ մեծ եռուղեռ կար: Հոն աշակերտներ ու դասընկերներ աղմուկով զիրար կը բարեւէին եւ անմիջապէս կը սկսէին արձակուրդին իրենց անցողիկ կեանքին պատմութիւնն ընել վառ գոյներով:

Բակին մէկ անկիւնը կեցած էր պարզօրէն բայց մաքուր հագուած բաւական գեղանի աղջիկ մը եւ ժպտադէմ կը դիտէր խաղցողներուն խոյանքը: Անոր ականարկը սակայն աւելի յաճախ կ'ուղղուէր մուտքին կողմը եւ անհամբեր կ'երեւէր: Յայտնի էր որ մէկու մը կ'սպասէր: Իր դասընկերուհիներէն շատեր կը մօտենային արագ քայլերով, բարի գալուստ կը մաղթէին իրեն եւ պահ մը խօսակցելէ վերջ կը հեռանային զբօսանելու:

Յանկարծ բակին արտաքին դրան մէջ զրծեցաւ խելացի աշխարհով աղջկան մը հասակը: Անոր այտերը կարմրած էին եւ արագօրէն կը շնչէր. վազած ըլլալու էր: Պահ մը կանգ առաւ դարպասի սեմին եւ իր խուզարկու նայուածքը պտըտցուց շրջապակին վրայ: Դէմքը նախ մըթազնեցաւ, բայց իսկոյն պայծառացաւ եւ ակընթարթի մը մէջ վազեց ինկաւ անկիւնը կեցող աղջկան թեւերուն մէջ:

— Ազատուհի՛...

— Մարի՛...

— Ի՞նչպէս ես, սիրելիս, ո՛հ, որքա՛ն կարօտցած եմ քեզ: Ձեռ կրնար երեւակայել թէ ի՞նչ

անհամբերութեամբ դպրոցի վերաբացման կը սպասէի քեզ տեսնելու համար: Նամակներդ չէին կրնար կարօտս յագեցնել: Լաւ կ'երեւիս, տարակոյս չունիմ թէ հանգիստ անցուցիր արձակուրդդ ծնողքիդ հետ:

— Շնորհակալ եմ, սիրելիս, քու սիրոյդ վրայ բնաւ կասկած չունիմ: Ես ալ նոյնքան քու պակասող կը զգայի. թէեւ ծնողքիս քով շատ երջանիկ էի: Փառք Աստուծոյ:

Ազատուհիի ծնողքը հեռաւոր աւան մը կը բնակէին: Ինք երկու տարիէ ի վեր քաղաք կ'երթար ուսանելու: Արձակուրդին կը վերադառնար ծննդավայրը:

Իսկ Մարի քաղաքացի էր: Հայրը երեք տարի առաջ մեռած էր: Մայրն էր որ դիշերը ցորեկին խառնած ասեղ ծեծելով իր մէկ հատիկ աղջկան կրթութեան ծախսերը կը հոգար: Չէր ուզած որ Մարին անուս մնայ, բայց ոեւէ դըպրոց ղրկելու ալ կը վախնար: Հարցուփորձ ընելով գտած էր որ Ք... դպրոցին միջավայրը բաւական լաւ համբաւ մը ունէր: Ամսական որոշ դրամար մը պէտք էր վճարել սակայն: Տիկին Արաքսի այդ գոհողութեան առջեւ չընկրկեցաւ. իր աշխատութեան ժամերը աւելցուց ու յաջողեցաւ ծայրը ծայրին բերելու:

Դպրոցէն գոհ էր. բայց դժբախտաբար մեծ պակաս մը կար որ իրեն ցաւ կուտար: Ս. Գրոց դաս չկար հոն: Բարոյագիտութեան վրայ դասախօսութիւններ կ'ըլլային միայն: Տիկին Արաքսի այդ թերին լրացնելու կ'աշխատէր՝ անձամբ տալով իր աղջկան քրիստոնէական կրթութիւնը, զայն կիրականօրեայ դպրոց ղրկելով հանդերձ:

Մարին պատուիրած էր իր բոլոր դասընկերներուն հետ սիրալիր վերաբերում ունենալ, իսկ անոնց հետ մտերիմ յարաբերութիւն ընելէ ըզգուշանալ: Աւելի լաւ է, ըսած էր, մէկ փորձուած ու ճշմարիտ բարեկամուհի, քան թէ հապճեպով ձեռք բերուած շատ մը մտերմութիւններ: Այդ բարեկամուհին շուտով գտած էր Մարի: Ազատուհի ամէն կերպով գովելի աղջիկ մըն էր: Ուշիմ էր, ճշմարտախօս ու անաչառ: Ծնողքը հարուստ էին ու հաւատացեալ: Իր խոնարհ ու զոհող բնաւորութեամբ Մարին հետ սերտ յարաբերութիւն մշակած էր:

Աւա՛ղ, սակայն, այդ մտերմութիւնը նախանձը շարժած էր Անահիտի, որ բարեկեցիկ այլ աշխարհիկ ընտանիքի մը աղջիկն էր: Ան միշտ արհամարհանքով կը վարուէր Մարին հետ ու բնաւ չէր ծածկեր Ազատուհիին հանդէպ ունեցած

գին այս գործէն եւ հաւատացեալներուն սրտով եղած հոգեկան միութենէն: Մենք անհատապէս պէտք է ձգտինք եկեղեցիին այս միութեան իրականացման քաջելով «ինչպէս կը վախելէ այն կոչումին սրով կանչուեցանք, բոլոր խոնարհութիւնով ու հեզութիւնով, երկայնատուութեամբ, սիրով իրարու ներողամիտ ըլլալով» (Նփես. Դ. 1, 2):

Թարգ. Ի. Յ. Ա.

ատելութիւնը: Դասարանին յետիններէն էր Անահիտ եւ իր վրէժը լուծելու համար կը ջանար միւսներէն աւելի լաւ հագուել եւ շարունակ աւելորդ պննանքներով կը զարդարէր ինքզինքը:

Ազատունի եւ Մարի որոշած էին փափկութեամբ վարուիլ անոր հետ եւ յարգանքով ու սիրով կը փոխարինէին անոր արհամարհանքն ու ատելութիւնը: Անոնց այս ընթացքը աւելի կը զրգռէր Անահիտը, որ բնաւ չէր յաջողեր առիթ մը գտնել զանոնք ուսուցչուհիին առջև չարախօսել:

Դպրոցին տնօրէնունին այս բոլորէն աեղեակ էր: Նէ լուռ հիացում ունէր այդ զոյգ մը մտերմութիւններուն հանդէպ եւ յաճախ ինքնիրեն կը հարցնէր թէ ինչ միջոց գործածելու էր այդ կարգի աշակերտուհիներուն թիւը շատցնելու համար: Զարմանքով կը տեսնէր որ բարոյագիտութեան դասերը աղջիկներուն ներքին կեանքը չէին կրցած փոխել:

Այն պահուն երբ Ազատունի եւ Մարի գիրար վերագտած սիրոյ խօսքեր կը փոխանակէին, բռնաւ ուշադրութիւն չըրին թէ իրենց ուսուցչուհին քանի մը քայլ հեռուն կեցած զիրենք կը դիտէր համակրական նայուածքով մը:

Նոյն միջոցին մօտեցաւ Անահիտ: Հագուած էր վարդապոյն մետաքսէ շրջագգեստ մը, շքեղ ժապաւէններով զարդարուած: Գոռոգ քալուածքով անցաւ երկու աղջիկներուն ճիշդ առջեւէն, առանց անոնց կողմն իսկ նայելու:

Ազատունի եւ Մարի յանկարծ լռեցին եւ իրարու նայեցան: Անոնց նայուածքին մէջ արխարութիւն լեցուած էր: Յետոյ իրարու ձեռք տուած յառաջացան դէպի իրենց դասարանը, միշտ լուռ: Ուսուցչուհին որ Անահիտի ընթացքը դիտած էր, սկսաւ զոյգին հետեւիլ, կարծես անըզ-զալաբար: Դասարանը պարապ էր եւ առջեւի միջանցքին մէջ երթեւեկ չկար: Երկու ընկերուհիները ներս մտան: Ուսուցչուհին հասաւ եւ անոնցմէ առինքնուած կ'ուզէր ինքն ալ ներս մըտնել, երբ յանկարծ կանգ առաւ. ներսէն սա խօսակցութիւնը լսեց.

Մարի, սիրելիս, միայն Աստուծոյ շնորհքով կրնանք մեր սկսած ճամբան շարունակել: Առաջին օրէն իսկ յայտնի է որ Անահիտ նոյն թըշնամական դիրքով մեզ պիտի տառապեցնէ: Կաւ չենք ընել եթէ հոս ծունկի վրայ գանք եւ միասին ինդրենք որ Տէրը մեզի օգնէ եւ կարենանք իրեն պատիւ քերել մեր ընթացքով:

— Ըիշդ նոյն բանը ես պիտի առաջարկէի, Ազատունի, առանց Անոր օգնութեան չենք կրնար ճշմարտապէս սիրել մէկը որ մեզ կ'ատէ: Յետոյ

շնորհակալութիւն յայտնենք որ մեզ դարձեալ իրարու քով բերաւ եւ իրմէ իմաստութիւն խնդրենք մեր դասերուն համար. այս տարի աւելի ծանր պիտի ըլլան անոնք:

Խօսակցութիւնը դադրեցաւ: Վարժուհին մի քանի երկվայրկեան սպասեց: Զայն չկար: Բակէն խաղցողներուն զուարթ կանչերը ականջին կը հասնէին: Յետոյ դռնէն ներս նայեցաւ անաղմուկ: Երկու աղջիկները քով քովի ծունկի եկած էին եւ իրենց ձեռքերը միացուցած լուռ կ'աղօթէին: Անմիջապէս ետ քաշուեցաւ: Աղօթող զոյգին պատկերը խորապէս ազդեց իր վրայ: Անձայն հեռացաւ ու գնաց ուղղակի տեսչուհիին քով: Ամէն բան պատմեց անոր:

Տեսչուհին յուզւումով մտիկ ընելէ վերջ սկըսաւ մտածել: Պահ մը ետք հաստատ ձայնով մը ըսաւ.

— Կը խոստովանիմ թէ այդ երկու աղջիկներուն կեանքը ինծի մեծ դաս եղած է: Զերմ փափաքս էր որ մեր բոլոր աշակերտներն ալ անոնցմէ օրինակ առնէին: Յաճախ խորհած եմ Ազատունիին ու Մարիին մասին: Հիմա կը հասկնամ թէ աղօթքի եւ քրիստոնէական կրթութեան կը պարտին անոնք իրենց ունեցած շնորհքը: Վաղուընէ սկսեալ Ս. Գրոց դաս պիտի հաստատեմ դպրոցին մէջ: Մեր առօրեայ դասաւանդութիւնները աղօթքով պիտի սկսին ու վերջանան: Որոշումս հաստատ է:

Այդպէս ալ եղաւ:

Ըիշդ մէկ տարի յետոյ դպրոցի վերաբացման օրը, նոյն բակին մէջ, փոքրիկ խմբակ մը մտերիմ ընկերուհիներ սիրալիւր խօսքեր կը փոխանակէին իրարու հետ: Երեք էին անոնք — Ազատունի, Մարի եւ Հռիփսիմէ — նախկին Անահիտը — որ իր անունը փոխած էր եւ դարձած դպրոցին ամենէն սիրելի աշակերտներէն մին:

Յ. Բ.

Ես ընկեր եղայ այն ամենուն հետ որոնք Թեզմէ կը վախնան եւ Գու հրաժաններդ կը պահեն:

Սաղ. ԾԺԹ. 63

Երկրի մէջ եղող սուրբերուն ու պատուական-ներուն, անոնց վրայ է իմ բոլոր հաճութիւնս:

Սաղ. ԺԶ. 3

(Շար. խմբագրականի)

Այս, եթէ ժանտախտը սկսէր հոգ, առաջին փախչողները Յուդայի պիղծ ոգիէն վարակուողները պիտի ըլլային, սակայն հիմա բոլորվին իրաւունք կուտան անոր: Վարակուած, վարակուած, ախտաւոր, ախտաւորուած:

Խօսքերս վերջացնելէ առաջ հարցում մըն ալ: Սիրելիներս, տեսնելէ յետոյ դիտողի անյարմար դիրքը, անոր կորսնցուցած պատեհութիւնները, անոր սպառնացող վտանգները, կ'ուզեմ հարցնել թէ դիտող մըն ետ: Չե՞ս ուզեր դիտողի դիրքդ փոխել. դեռ այդ վտանգաւոր գահավէժին մօտ երկար պիտի մնաս: Պիտի վարակե՞ս, պիտի վարակուի՞ս տակաւին: Մինչեւ ե՞րբ: Ահ, կայ աւելի սուրբ գործունէութիւն մը. Եղիսէի նման ականջդ զոցած արտաքին տպաւորութեանց հանդէպ, հետեւիլ Մեծ Վարդապետին, արժէ ինչ որ կ'արժէ, հետեւիլ մինչեւ հոն ուր Ան կ'երթայ, նոյնիսկ Դողգոթան, բայց Անոր հետ, մինչեւ որ Ան փառաւոր ըլլայ նաեւ քու կեանքիդ մէջ: Այս է Եղիսէի եւ Երեքովի մարգարէի միջև եղած տարբերութիւնը: Յ.Ն.Ղ.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՓԱՐԻԶԻ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Հոգեւորի հետ կը յարմարցնենք:

Ա. Կոր. Բ. 13

I

Հետագայ տողերը՝ Փարիզի 1937ի Միջազգային Յուդահանդէսէն ընդունած ներշնչումներու մէջ ամփոփումն է: Երկրորդ յօդուած մ'ալ պիտի հետեւի ասոր եթէ Տէրը կամի: Նպատակս սոսկ կոգելոր շինութիւնը ըլլալուն համար, զանց պիտի ընեմ Յուդադրութեան բովանդակութիւնն ու մանրամասնութիւնները:

..

Այս տարի, Փարիզի մէջ սարքուած է համաշխարհային ցուցահանդէս մը, որ կը ներկայացուի ամէն կարգի հնութիւններ եւ նորութիւններ: Այցելուն կ'ապշի մարդկային մտքին ամենավերջին նուաճումներուն եւ զմայլելի ձեռակերտներուն առջեւ: Կ'արժէ տեսնել:

Սակայն, երկու հազար տարիներէ ի վեր սար,

քըւած Տիեզերական Յուդահանդէս մըն ալ կայ, որ ներկայ, անցեալ եւ ապագայ բոլոր ցուցադրութիւնները կը գերազանցէ: Միշտ եղակի է ան եւ միշտ անբաղդատելի պիտի մնայ: Հոն, Աստուած Իր Միածին Որդին եւ Անոր փրկարար սիրոյն անքննելի ճշմութիւնը յայտնել կ'ուզէ բոլոր մեղաւորներուն: Ահա այդ Յուդահանդէսին խտացեալ տեղեկագրութիւնը — «Վասնզի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ Իր միածին Որդին տուաւ, որպէսզի ամէն ով որ ԱՆՈՐ հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ»: Ահա հրաւերի ծանուցագիրը — «Եկէք, վասնզի ամէն բան պատրաստ է»:

..

Աշխարհի ամէն կողմերուն մէջ, ամէն լեզուով արնքան շատ զրուեցաւ եւ խօսուեցաւ այս ցուցահանդէսին շուրջ, որ գուցէ անոր մանրամասնութիւններուն իսկ անտեղեակ մարդ չմնաց: Ի՞նչ փրոփականտ...: Միտք եւ բաղուկ, լեզու եւ զրբիչ, ձայնասփիւռ եւ հսկայական ծախսեր ի ըսպաս դրին այս ձեռնարկին յաջողութեան համար:

Այս պարագան յիշեցուց ինծի նախկին հաւատացեալներու աշխարհածաւալ գործունէութիւնը: Թէ՛ անհատաբար եւ թէ՛ հաւաքաբար, անոնք նոյն բոլորանուէր ջանքով, նոյն ապշեցուցիչ խանդավառութեամբ եւ նոյն հսկայական գոհարութիւններով Քրիստոսի վկայութեան եւ Աւետարանի տարածութեան լծուեցան: Կարդացէք Գործ. Դ. 32-37, ԺՂ. 16-17, ԻԱ. 13 Հոով. ԺԶ. 3-4ը: Մենք, ներկայ հաւատացեալներս, հիմնաւէ աւելի, ապշելու, ամչնալու եւ դատուելու ենք Սուրբ Դրոց հետեւեալ յայտարարութիւններուն առջեւ. — «Եւ այն ցիրուցան եղածները կը պըտըտէին եւ իօսքը կը քարոզէին». ու դեռ աւելին. — «Որոնք մեր Տէր Յիսուս Քրիստոսի անուանը համար անձերնին մատնած մարդիկ են»: Նախկին հաւատացեալները ալ ի՞նչ կրնային ընել եւ չըրին փրկութեան Աւետարանը տարածելու համար: Ներկայ աշխարհս դեռ ի՞նչ կրնար ընել որ չըրաւ իր զիտական, քաղաքական եւ ճարտարարուեստական ծրագիրները յաջողցնելու համար: Իսկ մենք ի՞նչ ըրած ենք Տէրոջը թագաւորութեանը յառաջացման համար: Դուն ամէն ջանք եւ ամէն միջոց կը գործածե՞ս քու օրհնեալ Փրկիչդ կորսուածներուն ճանչցնելու համար: Եթէ «դուն ամբարիշտը իր ճամբայէն զգուշացնելու համար չխօսիս, այն ամբարիշտը իր անօրէնութեանը մէջ պիտի մեռ.

նի, կ'ըսէ Տէրը, Բայց անոր արիւնը քու ձեռքէդ պիտի փնտռեմ»:

Առանց պետական արտօնագրի սակայն, ոչ ոք կրնայ ցուցադրաւայրը մտնել: Այսպիսին զրկուած պիտի մնայ ցուցադրուած հրաշալիքներու վայելքէն, մինչ հազարաւորներ ներսը կը հրճուին:

Երկինք մտնելու ալ արտօնագիր մը կայ, իր տեսակին մէջ անգերազանցելի է ան, հետեւեալ առաւելութիւններով. —

1. Առաջինը՝ շահադիտական վաճառք մըն է, Մինչդեռ երկինքի արտօնագիրը՝ Աւետարանի պատգամովը մատակարարուած ՊԱՐԳԵԻ մըն է (Հոով. 2. 23):

2. Ան՝ կը ծախուի: Այս՝ ձրի կը տրուի (Յայտ. ԻԱ. 6): Ան՝ դրամով կը գնուի: Այս՝ հաւատքով կ'ստացուի (Եփես. Բ. 8,9):

3. Ան՝ ունեւորներու յատուկ է: Այս՝ անխըտիր ամէն հաւատացողի եւ փափաքողի կը շնորհուի (Յովհ. Գ. 16) առանց ստակի եւ առանց գնոյ (Եսայ. ԾԵ. 1):

4. Ան՝ վաղանցուկ հաճոյքներու արտօնաթուղթ մըն է: Այս՝ մեղաց թողութեան, Աստուծոյ հետ եղած հաշտութեան, որդեգրութեան հետեւող կատարեալ փրկութեան, երկնային քաղաքացիութեան եւ յաւիտենական ժառանգութեան վաւերագիրն է (Հոով. Ե. 13-18):

5. Վերջապէս առաջինը՝ մարդկային ստորագրութիւն կրող կորնչական թուղթ մըն է: Հիթլէր չպատռեց հզօր պետութեանց ստորագրութիւնը կրող Վերսալի եւ Լոգանոյի ծանրակշիռ դաշնագիրները: Սակայն հաւատացեալին արտօնագիրը՝ անձեռնմխելի եւ անկորնչելի է անով որ պատրաստուած է Ամենակարողին կողմէն: ստորագրուած՝ Քրիստոսի արիւնովը եւ կնքուած՝ Ս. Հոգւոյն ձեռքովը (Ա. Պետ. Ա. 2-7):

Դուն այս օրհնեալ արտօնագիրը ունի՞ս, սիրելի ընթերցող: Երկինք մտնելու արտօնաթուղթը՝ ապաշխարող մեղաւորին սրտին մէջ Սուրբ Հոգւոյն վկայութեամբը յառաջ եկած փրկութեան վստահութիւնն է (Հոով. Ը. 16): Չըլլայ որ բերաւորներ, նոր Երուսաղէմի մարգարտեայ դռներէն ներս մտնելու պահուն՝ դուն դուրս մնաս: Ապա երբ անոնք անպատմելի եւ փառաւորեալ խնդութիւնով վերին ժաթանգութիւնը կը վայելեն, դուն՝ անհաւատութեանդ կամ անտարբերութեանդ պատճառաւ, դուն ու անվախճան ափսոսանքով ողբաս: Յիշէ միայն, որ փրկու-

թեան արտօնագրի Պարգեւատուն Յիսուս՝ լուծ է — «Խնդրեցէք եւ պիտի առնէք»: Առաքեալը կ'աւելցնէ, «Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկութեան օրը»:

Ներսը հրապարակին վրայ ենք: Հաժաշխարային այս ցուցահանդէսին կը մասնակցին գրեթէ բոլոր ազգերը: Իրենց շլացուցիչ ունայնութիւնները ցուցադրելու նպատակին մէջ՝ միացած են իրարու նոյնիսկ ամենաանհաշտ եւ ուխտերիմ ժողովուրդներ, ինչպէս Խորհրդային Ռուսիան եւ զայն ջլատելու ձգտող Գերմանիան, կայսերապաշտ Անգլիան եւ իր դէմ ցցուող մեր ցակից Իտալիան:

Ինչո՞ւ ուրեմն, Փրկոյթեմք ԱԻԵՏԱՐԱՆԻՆ գերազանց ճոխութիւնը, կորսուող աշխարհին աւելի լաւ ներկայացնելու համար, չմիանան ճշմարտութեամբ Քրիստոսի անունն ու Հոգին կրող բոլոր եկեղեցիները: Անմահ հոգիներու փրկութիւնը բաւականաչափ վսեմ նպատակ մը եւ ստիպողական պատճառ մը չէ՞ միաբանութեան մղելու բոլոր գծաւալ հաւատացեալները: Այս չէ՞ր արդեօք վերջին եւ ամենամեծ փափաք մեր Փրկչին, երբ կ'աղօթէր, — «որպէսզի անոնք կատարեալ ըլլան միութեան մէջ ու աշխարհ վիտնայ թէ դուն զրկեցիր զիս» (Յովհ. ԺԷ. 23): Ո՛հ, ժամանակը չէ՞ արդեօք մեր՝ թէ՛ անհատական եւ թէ՛ հաւաքական պառակտող բոլոր խնդիրները մէկդի նետելու: Միաբանութեան սիրոյն համար՝ հրաժարելու չե՞նք ամէն կարգի ճղճիմ հաշիւներէ:

Միութիւնը գօրութիւն է: Արդիւնքը կը համեմատի ջանքին: Ինչպէս այս հսկայական ցուցադրութիւնը արդիւնք է միացեալ հսկայական ջանքերու, նոյնպէս հոգեւոր գետնի վրայ՝ անկշիռ արդիւնքներ կրնան ձեռք բերուիլ եթէ բոլոր անկեղծ հաւատացեալները միանան հաւատքի, սիրոյ եւ ջանքի մէջ: Այս ուղղութեամբ ԼԵՍԵԳԵՔ Սաղմոսերգութիւն հառաչանքը, — «Ահա որ չա՛փ բարի ու որչա՛փ վայելուչ է որ եղբայրները իրարու հետ ՄԻՍԲԱՆՈՒԹԵԱՍԲ բնակին...» վասնզի Տէրը հոն հաստատեց օրհնութիւնը ու կեանքը մինչեւ յաւիտեան: Ահա առաքեալին յորդորանքն ալ, — «Ջանալով Հոգւոյն Սըրբոյ ՄԻՍԲԱՆՈՒԹԻՒՆԸ խաղաղութեան կապովը պահել, մէկ մարմին ու մէկ հոգի, ինչպէս կանչուեցաք ձեր կոչումին մէկ յուսովը»:

(Շար. տես դիմացը կողքին վրայ)

Հրապարակի վրայ ենք դեռ: Ոչ մէկ բան այնքան ակներեւ եւ ընդգեցեցիչ է, որքան «ազգաց ամբարտաւանութիւնը»: Ամէն ազգ կարծես նահանջներու աշխատած է միւսը: Ամէն մէկ շինութիւն՝ դրացին գերազանցելու ճիգ մըն է: Մէն մի գործ՝ զինք հեզինակող ժողովուրդին ինքնագերազանսման կոթողն է: Մրցակցութեան նոյն հոգին չէ՞ որ ներկայ աշխարհը հակամարտ ու ժերու եւ արիւնոտ բաղխումներու ռազմադաշտի մը վերածած է:

Ու յիշեցի որ տիեզերքի առաջին մեղքը, որ մեզի անձանօթ դարաշրջանի մը մէջ գործուած ըլլալու է, «մեծ ըլլալու» խորհուրդն է, «Դուն սրտիդ մէջ ըսած էիր, երկինք ելլեմ ու իմ աթոռս Աստուծոյ աստղերէն վեր բարձրացնեմ... ամպերու բարձրութիւններու վրայ ելլեմ, Բարձրելոյն նմանիմ. բայց ահա դժոխքը կ'իջնես» (Ես. ԺԴ. 12-15): Գահավիժո՛ւմ... Մեր նախածնողքը «աստուածներու պէս ըլլալու» փափաքէն, ծուղակն ինկան եւ զրախաւէն արտաքուսեցան: Կորիւ, Դադան եւ Աբիրոն ուղեցին Մովսէսն ու Ահարոնը նահմտցնել: Ողջ-ողջ դժոխք իջան: Յովհաննէս եւ Յակոբոս թագաւորին աջ եւ ձախ կողմը նստելու մարմաջին համար յանդիմանուեցան: «Ինտրոփէս առաջին ըլլալ կ'ուզէ»: «Վէճ մըն ալ եղաւ աշակերտներուն մէջ, թէ իրենցմէ ո՛վ մեծ պիտի ըլլայ»:

Ափսո՛ս, մեծ ըլլալու դարաւոր հոգին, այսօր, աւելի քան երբեք զօրացած կ'երեւի եկեղեցիներուն մէջ: Ահա թէ ինչու «Աստուծոյ ընտանիքին» մէջ ալ պակաս չեն վէճեր եւ անհամաձայնութիւններ, պառակտիչ դժուրութիւններ եւ զայն թակղալից բաժանումներ: Այս հոգին աշխարհի մէջ բնական է: Բայց մեր մէջ ներքի չէ: Ի՞նչ ընել: Ահա քանի մը գործնական թելադրանքներ:

Քննեցէք համամարդկային պատմութիւնը, եւ մեծութեան ձգտողներուն ողբերգական վախճանէն խրատուեցէք: Մրցակցութեան պատճառաւ կրակի, արիւնի եւ խռովութեան մէջ տապալակող ազդերուն նայեցէք եւ դողացէք: Երեսանկալ ծընրադրեցէք, յիշելով որ «Աստուած սփարաւաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կուտայ»: Ապա՝ օրէ օր ջանացէք ինքզինքնիդ մարգել Յովհաննէս Մկրտիչի եւ մեծ առաքեալին սկզբունքներովը — «Անիկա (Տէր Յիսուս) պէտք է որ մեծնայ եւ ես պզտիկնամ»: «Խոնարհութիւնով մէկզմէկ ձեր անձէն լաւ սեպեցէք»:

Կ'ուզենք շրջիլ: Յուցահանդէսը որպէս գործ մեծ է եւ ընդարձակ: Նոյն համեմատութեամբ ալ սպասաւորող պաշտօնեաներ կան: Կան նաեւ աւերակի նմանող կիսաւարտ շէնքեր եւ խուցեր: Որովհետեւ կարգ մը գործաւորներ գործադուլ հռչակած են:

Ու ես ինձ ծարցուցի, կա՞յ գործ մը աւելի ընդարձակ եւ ստիպողական, քան Տէրոջը այգին: Ան՝ աշխարհիս չափ լայն է եւ կենաց ու մահու խնդիրի չափ ստիպողական: Ափսո՛ս, սակայն, մշակները քիչ են: Անոնցմէ ալ ոմանք տկար են, ոմանքը անհաւատարիմ ու դեռ շատեր ալ գործադուլ հռչակած: Ի՞նչ ընելու ենք: Յուսահատի՛նք: Գործը լքե՛նք: Երբե՛ք: Տէրը կ'ըսէ, — «Աղօթեցէք հունձքին Տէրոջը որ մշակներ հանէ»: Ահա բաւարարութեան աղբիւրը — ԱՂՕԹԻ:

Աղօթենք ուրեմն, արդէն ծառայութեան լըծւած մշակներուն համար, որպէսզի վերէն զօրութիւն հաղնին: Աղօթեցի՛նք. ալ չքնադատենք զանոնք, այլ յաւէտ ցոյց տանք անոնց խոնարհութեան. հնազանդութեան եւ գործակցութեան հոգին, որպէսզի խնդութեամբ կատարեն իրենց պաշտօնը եւ ոչ թէ հառաչանքով: Աղօթենք որ Տէրը կարող եւ արժանաւոր նոր մշակներ ալ հանէ իր հունձքին: Աղօթենք մանաւանդ, որպէսզի իրաքանչիւր հաւատացեալ Տէրոջը գործին ընդարձակութեան եւ ստիպողականութեան շուրջ նոր տեսիլք ընդունի: Զէ՞ որ Աստուծոյ ամէն մէկ զաւակ Աստուծոյ «գործակից» է: Հետեւաբար, ամէն մէկս զիտակից իր պատասխանատուութեան, պարտաւոր ենք «ծախս ընել եւ եւ ծախս ըլլալ» Տէրոջը ծառայութեանը մէջ: — Ահա մշակներ շատցնելու ուղիդ կերպը:

Ով դուք սուրբեր քաջութիւնով

Ասպարէզ ելէք գործի.

Գործեցէք քանի որ լոյս կայ,

Ձի մահն է շատ մօտ մեզի:

«Հոգիով բորբոքեցէք, Տէրոջը ծառայեցէք»:

(Շար.)

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savournin Marseille

Le Gérant: H. N. GHAZAROSSIAN

ԱՄԷՆ ԺԱՄ, ԱՄԷՆ ՏԵՂ

Ապրիլ ամէն ժամ, Ապրիլ ամէն տեղ, Ապրիլ ցաւի կամ ուրախութեան մէջ, Ապրիլ ամէն ժամ, Ապրիլ ամէն տեղ, Ապրիլ, Ապրիլ վասն Յիսուսի:

Մարտի ամէն ժամ, Մարտի ամէն տեղ, Մարտի ցաւի կամ ուրախութեան մէջ, Մարտի ամէն ժամ, Մարտի ամէն տեղ, Մարտի, Մարտի վասն Յիսուսի:

Գործել ամէն ժամ, Գործել ամէն տեղ, Գործել ցաւի կամ ուրախութեան մէջ, Գործել ամէն ժամ, Գործել ամէն տեղ, Գործել, Գործել վասն Յիսուսի:

Խօսիլ ամէն ժամ, Խօսիլ ամէն տեղ, Խօսիլ ցաւի կամ ուրախութեան մէջ, Խօսիլ ամէն ժամ, Խօսիլ ամէն տեղ, Խօսիլ, Խօսիլ վասն Յիսուսի:

Լոյս տալ ամէն ժամ, Լոյս տալ ամէն տեղ, Լոյս տալ ցաւի կամ ուրախութեան մէջ, Լոյս տալ ամէն ժամ, Լոյս տալ ամէն տեղ, Լոյս տալ, Լոյս տալ վասն Յիսուսի:

Յոյց տալ ամէն ժամ, Յոյց տալ ամէն տեղ, Յոյց տալ ցաւի կամ ուրախութեան մէջ, Յոյց տալ ամէն ժամ, Յոյց տալ ամէն տեղ, Յոյց տալ, Յոյց տալ սէրն Յիսուսի:

1. Ապրիլ ամէն ժամ, Ապրիլ ամէն տեղ,
Ապրիլ ցաւի կամ ուրախութեան մէջ.
Ապրիլ ամէն ժամ, Ապրիլ ամէն տեղ,
Ապրիլ, Ապրիլ վասն Յիսուսի:
2. Մարտի ամէն ժամ, Մարտի ամէն տեղ,
Մարտի ցաւի կամ ուրախութեան մէջ.
Մարտի ամէն ժամ, Մարտի ամէն տեղ,
Մարտի, Մարտի վասն Յիսուսի:
3. Գործել ամէն ժամ, Գործել ամէն տեղ,
Գործել ցաւի կամ ուրախութեան մէջ.
Գործել ամէն ժամ, Գործել ամէն տեղ,
Գործել, Գործել վասն Յիսուսի:
4. Խօսիլ ամէն ժամ, Խօսիլ ամէն տեղ,
Խօսիլ ցաւի կամ ուրախութեան մէջ.
Խօսիլ ամէն ժամ, Խօսիլ ամէն տեղ,
Խօսիլ, Խօսիլ վասն Յիսուսի:
5. Լոյս տալ ամէն ժամ, Լոյս տալ ամէն տեղ,
Լոյս տալ ցաւի կամ ուրախութեան մէջ.
Լոյս տալ ամէն ժամ, Լոյս տալ ամէն տեղ,
Լոյս տալ, Լոյս տալ վասն Յիսուսի:
6. Յոյց տալ ամէն ժամ, Յոյց տալ ամէն տեղ,
Յոյց տալ ցաւի կամ ուրախութեան մէջ.
Յոյց տալ ամէն ժամ, Յոյց տալ ամէն տեղ,
Յոյց տալ, Յոյց տալ սէրն Յիսուսի: